


Ա. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ
ՅԵԿ
Ե. ՄԱԶՄԱՆՅԱՆ,

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

II ԴԱՍԱՐԱՆ



491.99-8

Դ - 98

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

1 • 9 • 4 • 0



1005-10

Հարմ.

2-6162a

491.99-8-

Դ-98

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՅԵՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մ. ԴՈՒՐԴԱՐՅԱՆ
Կազմեցին Ն. ՄԱԶՄԱՆՅԱՆ



ԻНՎ. № 16663

ՀԱՅՊԵՏՀԱՆՑ
ՅԵՐԵՎԱՆ

1940



8261


4 APR 2013

Պատմ. Խմբագիր՝ Ա. Սահերոսյան
 Տեխ. Խմբագիր՝ Ի. Վարդամյան
 Մրրագրիչներ՝ Ա. Արքաֆանյան, Բ. Ղուկասյան
 Կոնտրոլ սրբագրիչ՝ Շ. Գարագաջ

Армянский язык
 книга для чтения
 II кл.
 Гиз Арм. ССР, Ереван, 1940 г.



555-87



1. ԴՊՐՈՅԻ ՃԱՄՓԱՆ

Զմեռվա բուքին, սառնամանիքին
 դպրոցի ճամփան
 դժվար է, յերկար՝ շատերի համար;
 Զվարթ գարունքին, յերգին ու ծաղկին
 դպրոցի ճամփան
 կարճ է, դուրալի կարծես ավելի:
 Իսկ ով սե'ր ունի մեզ պես ուսումի,
 դպրոցի ճամփան
 Միշտ կարճ է, սիրուն՝ ձմեռ թե գարուն:

2. ԱՄԱՌԻ


1

Վաղ առավոտ ե: Անտառի հետեւից ծագում ե առևլ:

Բնությունը կենդանացավ: Թուչունները յերգեցին: Անտառի բնակիչները գործի անցան:

Հանկարծ զիլ հնչեց.

— Տրու-րու-րու: Տրամ-տամ-տամ-տամ:



Ենիորի ու թմբուկի ձայների տակ դաշտ դուրս յեկան պիոներները:

Զոկատավարը հրամայեց.

— Զոկատ, կանգ առ: Դե, ընկերներ, շտապեցէք: Մարզանքից ու նախաճաշից հետո անտառ ենք դնալու:

2

Զանցավ մի ժամ— պիոներները ցրվեցին անտառի մեջ— խարույկների համար ցախ հավաքելու: Այս ու այն կողմից ձայներ եյին լսվում.

— Վայ, ինչքան վորդե՞ր կան:

— Այ իսելո՞ք, ինչ վորդ— սրանք մրջյուններ են:

— Տես ինչպիսի հաստիկ վորդ եմ գտե՞լ:

— Իսկ յես մի ահոելի բզեղ բռնեցի:

— Գիտե՞ք ինչ, ընկերներ,— ասում ե Սիրիկը,— յեկեք կոլեկցիա կազմենք: Այդ կլինի մեր ճամբարի նվերը դպրոցին:

— Կեցցե՛ Սիրիկը. լավ բան ե մտածել,— այս ու այն կողմից բացականչեցին պիոներները:

Յեռում ե աշխատանքը: Յերեխաները հանեցին իրենց հետ բերած տուփերը, սրվակները, թիթեռ վորսալու ցանցերը...

Վող ամառը յեռանդով հավաքում եյին. ճանաչեցին անտառում ապրող թուչուններին, միջատներին: Խմացան, թե ո՞վ ե ապրում կեղեկի տակ, ո՞վ ե առնչինում տերևների միջին, ո՞վ ե թագնվում կոճղերի արանքներում:

Յեվ այնուհետև վոչ վոք այլևս մրջյուններին տեսնելով՝ նրանց վորդ չեր անվանում:

ԲԱՌԱՐԱՆ

1. Շեփոր— փող (զիլ ձայնով՝ փշելու դործիք):
2. Կոլեկցիա— հավաքածու:
3. Սրվակ— փոքրիկ շիչ:
4. Կոնդ— կտրված ծառի մնացորդը:

Յ. ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԱՅԹՆԵՐԸ

1

Պայծառ արեր բարձրացավ յերկինք և վոսկե-
կայլ ճառագայթները տարածեց յերկրի վրա:

Առաջին ճառագայթն ընկալ արտուտի վրա: Ար-
տուտը թփրտաց, թափ տվեց թերերը, դուրս թռավ
քնից, բարձրացավ վեր ու վեր և սկսեց յերգել բարձ-
րածայն, — ճի՛վ, ճի՛վ, ճի՛վ—վիլի, ճի՛վ—վի-
լի. վո՛ւտ-վո՛ւտ-վո՛ւտ. ճը՛ռու..

2

Յերկրորդ ճառագայթը նապաստակի վրա ընկանվ.
Նապաստակն ականջները խլացրեց, նայեց դեսուդեն,
ցատկելով մտավ ցողաթաթախ կանաչկուտը և սկսեց
նախաճաշիկ անել մեղրածոր խոտերով:

3

Յերրորդ ճառագայթը հավարունն ընկալ: Աքա-
ղաղը թափ տվեց թերեր և կանչեց ծուղրուղո՛ւ...
զո՞ւ-զո՞ւ-զո՞ւ: Կանչեց աքաղաղը հավերին, վոր ցած
իջնեն թառերից և առավոտյան նախաճաշիկն անեն:

Հավերը ցած թռան, կչկչացին և աքաղաղի հրա-
վերով սկսեցին քուջուջ անել:

4

Չորրորդ ճառագայթը փեթակի վրա ընկանվ: Մե-
զուները տաքացան և դուրս ընկնելով՝ դես ու դեն
թռան տղտղալով, վոր մեղրածոր ծաղիկներից իրենց
սնունդն ստանան:

5

Հինգերորդ ճառագայթն ընկանվ մի ժիր մանուկի
անկողնու վրա և սկսեց նրա աչքերը ծակծկել. նա վեր

թռավ տեղից Ե չտապով պատրաստվեց ուսումնարան
գնալու:

ԲԱՌԱՐԱՆ

1. Կանաչկուտ — կանաչով ծածկված տեղ:
2. Մեղրածոր — քաղցր, մեղր ծորող:
3. Ցողաթաթախ — ցողով թաթախված, ծածկված:

4. ԱՆՈՒԾ ՈՐԵՐ

Անուշ որեր, ուրախ տարի,
Ռւնենք անչափ բերք ու բարի,
Հպարտ ենք մենք ու յերջանիկ,
Կեցցե՛ աղատ մեր հայրենիք:

Մէծ Ստալին, դարեր ապրես,
Դարեր շողա արևը քեզ,
Ժողովուրդը քեզնով հպարտ
Յերջանիկ և ու միշտ անպարտ:

5. ԱՇԽԱՐՀՈՒՄ ՄԻ ՄԵԾ ՅԵՐԿԻՐ ԿԱ

Դա աշխարհի ամենամեծ յերկիրն ե: Վոտքով մեկ
ճայցըից մյուսը գնալու համար հարկավոր է չորս տա-
րի:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին, քոլորին մի
անդամից ուղիղոյով.— որվա վո՞ր ժամանակն ե:

Վոմանք կպատասխանեն.

— Մեզ մոտ առավոտ ե:

Մյուսները կպատասխանեն.

— Մեզ մոտ կեսոր ե:

Ուրիշները կպատասխանեն.

— Մեզ մոտ յերեկո յե:

Հարցնենք այդ յերկրի բնակիչներին միանդամից՝
ռադիոյով:

— Տարվա վո՞ր յեղանակն ե:
Վոմանք կպատասխանեն.
— Մեզ մոտ գարուն ե:
Մյուսները կպատասխանեն.
— Մեզ մոտ ձմեռ ե:
Հարցնենք այդ յերկրի բնակիչներին.
— Ի՞նչ հարստություն կա ձեզ մոտ:
Վոմանք կպատասխանեն— յերկաթ.
Մյուսները— հաց.
Ուրիշները— քարածո՛ւխ, բամբա՛կ, նա՛վիթ...
Այսպես հարուստ ե ու սքանչելի մեր հայրենիքը,
ամբողջ աշխարհի աշխատավորների հայրենիքը, Խոր-
էքրդային Միությունը:



Մ. Ազիզեկով Ստ. Շահումյան Պ. Զափարիձե

6. ՔՍԱՆՎԵՑԻ ՅԵՐԳԸ

«Մենք կմեռնենք,
Բայց կոմունան
Վողջ կմնա
Հավիտյան»:
Այսպես ասին


Քանալեցը
Դահիճներին
Այն վարձկան:
Այժմ հազար—
Հազար անխլ
Գործարանում
Դղրդում,
Հազար-հազար
Տրակտորներ
Մեր գաշտերում
Հոնդում,
Քսանվեցի
Յերգն են յերգում,
Աշխարհով մեկ
Զիլ կանչում.
«Նրանք մեռան,
Բայց կոմունան
Վողջ կմնա
Հավիտյան»:

ԲԱՌԱՐԱՆ

- Դահիճն— մարդասպան, մահապատիժ կատարող:
- Հավիտյան— ընդմիջություն:

7. ԾԻՏԻԿԸ

Յերգում եմ, յերգում
Յեկ ուրախանում,
Վոր իմ յերգերով
Աշխարհն ե հրճվում:
Իմ գործն ե՝ անվերջ
Յերգել ու յերգել,
Ազատ ու անհոգ
Ճախրել անարդել:



Աշխարհը իմ դեմ
Լայն ե ու արձակ,
Ուրախ թռչում եմ,
Ճախրում համարձակ:

Ուր ել վոր ուղեմ
Կարող եմ թռչել,
Շնորհք ունիմ յես
Յել ճկուն թհվեր:


ԲԱՌԱՐԱՆ

1. Անարգել— առանց արդեւքի;
 2. Ճկուն— փափուկ, ծովզող:
 3. Ճախրել— թռչել, պտույտներով բարձրանալ (ոդում):
-

8. ՎՈԶՆԻՆ ՑԵՎ ՈՉՀ

1

Ամառվա մի տաք որ եր: Արեկի չողերն այրում,
Խորովում եյին արտն ու արոտը: Դրսում տմեն ինչ
լուռ եր: Գյուղի առջևից հոսող վտակի վշշոցն ել չեղ
լովում. նա ել եր պապանձվել:



Որվա այդ չոդ պահին գյուղի բոլոր յերեխաները.
Հավաքվել եյին ձորի գլխին ու նայում եյին ցած:
Ներքեռում, ձորի մէջ կովում եյին վողնին ու ոձը:

Կորվը կատաղի յեր: Ոձը սուլում եր, թորիչքներ
եր կատարում վիշտ վողնու չուրջը, բայց վոչ մի կերպ
չեր կարողանում բռնել: Վողնին ել փոքրիկ գլուխը
հանում եր ու հարմար բողեյից ոգավում, կծում ոձի
մէջքը, փորը, վիզն ու նորից կծկվում: Վերջին անդամ
վիշերի միջից գլուխը հանեց, հանկարծ բռնեց ոձի
պոչը և կրկին կծկվեց:

2

Ոճն ինչքան աշխատում եր, չեր կարողանում առ
գատվել. ցավից վիշշայնում եր, յերբեմն գլուխն երմո-
տեցնում պոչին, յերբեմն մարմինն եր դես ու դեն նե-
տում: Վողնու փշերն ամուր ու սուր եյին և անինա
քրքրում եյին ոձի մարմինն ու գլուխը:

Ոճը հետզհետե թուլացավ, մարմնի վրա բազմա-
թիվ վերքեր բացվեցին, այլևս չեր սուլում, միայն
շնցլում եր ամբողջ մարմնով:

Վողնին ոձի պոչը պինդ կծած՝ կծկվել եր ամուր:
Բավական ժամանակ անցավ, մինչեւ ոճը բոլորովին
անշարժացավ: Արդեն սատկել եր:

Վողնին բաց թողեց նրա պոչը, զգուշությամբ մի
քանի անդամ հանեց իր գլուխը, գիտեց չուրջը, նա-
յեց ոձին, ապա գնաց ու ծածկվեց մոտակա թիւերի
տակ:

ՀԱՆԵԼՈՒԿԱՆԵՐ

Մի փոքրիկ կենդանի,
Զկարծեք ընտանի,
Գունդ ու կլոր
Փշակուր...

ԲԱՌԱՐԱՆ

1. Պահ— ժամանակ:
2. Պայպանձվել— լուել, համբանալ:

9. ԻՐԻԿՈՒՅ

Արել շատ եր հոգնել, ման եր յեկել ամբողջ որը.
«Հերիք ե,— ասավ,—

գնամ պառկեմ ու քնեմ»:

Տերեն ուրախ սվավում եր, վոր կանդ առավ.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—

արեն ել չի յերեռում,

յես ել պառկեմ ու քնեմ»:

Թռչնակը յերգում եր ծառի վրա, հանկարծ լոեց.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—

վոչ տերեն ե սվավում,

վոչ արեն ե յերեռում,

յես ել գնամ ու քնեմ»:

Նապաստակը վոստոստում եր թփերի տակ,
վոր ականջը սրեց.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—

վոչ թռչնակն ե ծլվլում,

վոչ տերեն ե սվավում,

վոչ արեն ե յերեռում,

յես ել գնամ ու քնեմ»:

Վորսկանը անտառում վորս եր վորոնում, կանգնեց.

«Ես ի՞նչ ե,— ասավ,—

վոչ նապաստակ ե վազ տալի,

վոչ թռչնակն ե ծլվլում,

վոչ տերեն ե սվավում,

վոչ արեն ե յերեռում,

յես ել գնամ ու քնեմ»:

Լուսինը ծագեց, ցած նայեց, տեսավ.

«Ինչ լա՞վ ե,— ասավ,—

վոչ վորսորդ ե ման դալի,

վոչ նապաստակ վազ տալի,

վոչ թռչնակն ե ծլվլում,

վոչ արեն ե յերեռում,

մենակ յես եմ վոր անքուն
քեֆ եմ անում յերկնքում»:

10. ՅԵՌ...

Ագուավը բանեց մի խեցգետին և նստեց ծառին:
Խեցետինն ուզեց ազատվի, կոցիցը զատվի ու
ասաց նրան.

— Վոսկեհատիկ, ազուավ տատիկ, ո՞վ ե մեղնից
կեղառուը:

Ագուավը սեղմեց կտուցը և կռուաց.

— Դո՛ւ...

— Վոսկեհատիկ, ազուավ տատիկ, ո՞վ ե մեղնից
նախշունը:

Ագուավը բացեց կտուցն ու կռուաց.

— Յե՛ս...

Կտուցը բաց անելուն պես, խեցգետինը կոցից շն-
կավ ջուրը և իրեն ազատեց:

ՀԱՆԵԼՈՒԿԻ — Ասում եմ. «արի, արի», չի գալիս:
Ասում եմ. «մի՛ դա, մի՛ դա», դալիս ե:

11. ԳԵՏԱԿԸ

— Ո՞ւր ես վազում

Այդպես արագ,

Այ դու կայտառ,

Եիրուն դետակ.

Կա՛նդ առ, խաղանք

Այս ծառի տակ:

«ԶԵ՛, վորքըիկո,

Գնամ պիտի.
Տես ջաղացը
Գյուղի մոտի.
Պետք է ուժ տամ,
Վոր պտտի:

Յածն ել հովտում
Անուշահոտ
Ինձ են մնում
Ծաղիկ ու խոտ,
Հոգնած, ծարավ
Տալարն ու հոտ:

Դե՛, տեսնո՞ւմ ես,
Մնաս բարով.
Ճամբաս ցանած
Հազար դործով,
Դադար չունեմ
Յես մինչև ծով»:



12. ՅԵՐԿՈՒ ԱՅԾ

Գետակի վրա վորպես կամուրջ մի նեղ գերան եր
Հցված: Մեկ անգամ յերկու կամակոր այծ իրար
Հանդիպեցին այդ կամուրջի վրա:

Յերկուսը մեկ անգամից չեցին կարող անցնել այդ
նեղ կամուրջով. պետք է նրանցից մեկը հետ կանգներ
Ե մյուսին ճանապարհ տար:

— Դու հետ դնա, վոր յես անց կենամ,— ասաց
Մեկը:

— Ինչո՞ւ դու հետ չես քաշվում, քան թե ինձ ես
առաջարկում,— պատասխանեց մյուսը:



— Քեզ ասում եմ՝ հետ քաշվիր, առաջ յես եմ
բարձրացել կամուրջի վրա:

— Ներողություն կանես: Գիտե՞ս ում հետ ես
խոսում, վոր դեռ բարկանում ել ես:

Այծերը ճակատ ճակատի զարկեցին, իրար գլուխ
պատեցին, և վերջը յերկուսն ել կամուրջից սայթա-
քեցին, ջուրը թափվեցին:

ԲԱՌԱՄԱՆ

1. Կամակոր— համառ, «իր խոսքին»:

2. Սայթաբել— «սոխ տալ», «պլատալ»:

13. ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌՆՈՒԿԻ

Մի որ մի փոքրիկ գառնուկ կորավ անտառում:
Յերկար ժամանակ դես ու դեն վագելուց հետո, սկսեց
կախենալ ու «մայրիկ, մայրիկ» կանչել:

Մայրը չլսեց նրան, բայց քաղցած պայլը լսեց:

— Ինչ վոր ուղում եմ ճաշխ համար, գտա, — ա-
սաց գայլը:

— Ա՛խ, գայլ քեռի, — ասաց փոքրիկ գառնու-
կը, — ինդրում եմ ինձ ցույց տաք մեր տան ճանա-
պարհը:

— Զեր տան ճանապարհը ցույց կտամ իմ փորում,
— դոռաց գայլը: — Յես քաղցած եմ և պետք ե քեզ ու-
տեմ:

— Ա'խ, խնդրում եմ... խնդրում եմ, գայլ քեռի,
բարի յեղեք, թույլ տվեք դնամ:

— Վոչ, վոչ, քեզ պետք ե ուտեմ, — կրկին գոռաց
գայլը և հարձակվեց գառնուկի վրա:

— Բայց, գայլ քեռի, — ասաց գառնուկը, — լսել
եմ, վոր դուք լավ ձայն ունեք. խնդրում եմ՝ ինձ հա-
մար յերգեք, վոր մի անդամ ել սղարեմ նախքան մեռ-
նելս, մի մեծ բան հո չի:

Այդ բանը դուք յեկավ գայլին, հենց դրա համար
ել նա հպարտացավ և պատրաստվեց յերգելու:

— Դե, — գոռաց գայլը, — ճաշելուց առաջ յերգը
լավ է, դրա համար ել շատ անդամ ճաշից առաջ յեր-
գում եմ, բայց քանի վոր այսոր շատ եմ քաղցած, մի-
այն մի յերգ եմ յերգելու, — ասաց նա, — վորից հետո
քեզ ուտելու յեմ: Դե պարի, բայց աշխույժ պարի:

Գայլն սկսեց մի յերգ վորնալ, իսկ գառնուկն
սկսեց պարել:

Յերբ գայլը դադարեց, գառնուկն առաց.

— Այդ լավ եր, բայց դուք ինձ համար մի քիչ
բարձր և արագ չերգեցիք, մի՞թե այդ ե ձեր ձայնը:

— Վո՛չ, — ասաց գայլը, — յես կարող եմ ավելի
բարձր յերգել և ավելի արագ, քան անտառի կենդա-
նիներից վորեե մեկը: Դե, լսիր:

Յեվ գայլը յերգեց ավելի բարձր ու ավելի արագ,
իսկ գառնուկը պարեց ավելի աշխույժ և ավելի լավ:

Գայլն այնքան աղմուկ բարձրացրեց, վոր չները
լսեցին ու վազեցին դեպի անտառը:

Յերբ գայլը չներին տեսավ, գադարեցրեց իր յեր-
գըն ու փախավ, իսկ չները սլացան նրա հետեւց:

Փոքրիկ ու խելացի գառնուկն ապահով տուն գնաց
քը մոր մոտ:

Ճ-Ճ-Ճ



14. ԲԿԼԻԿ ԶԿՆԻԿՐ

Զկնիկ, լո՛զ տուր, լող արա,
Դրսի վորսը թո՛ղ արա,
Իջիր ջրի հատակը,
Մինչև անցնի վտանգը:

Տե՛ս, փորձանք կա քո գլխին,
Մի լավ մտիկ յերեխին,
Վորդ ե խփել իր կարթին,
Չմոտենաս եղ վորդին:

Ինձ չլսեց շեկմիկը,
Ենձ չլսեց բկլիկը.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՈՅ. ԲԻBLIOTECΑ
ՀԱՅ-ԱՐՄ. ССР

Հո՛պ, կուլ տվից նա վորու,
Կարթը մնաց կոկորու:

ՃՈՒՏԱՍԵԼՈՒԿ.— Չուկ դցեմ՝ ձուկ կուլ տամ,
Մուկ դցեմ՝ ձուկ կուլ տամ:

15. ՊԵՏԻԿԻ ԴԵՂԱՏՈՄԱԾ

Լուսիկն արդեն առողջացել էր: Նա ուզում էր ան-
կողնից վեր կենալ, բայց բժիշկը թույլ չէր տալիս:
Սյսոր վերջին անգամ սպասում էյին բժշկին: Նրա դա-
լու ժամանակն էր: Մեկ ել՝ թը՝ խկ-թը՝ լոկ... մեկը
դուռը ծեծեց:

— Համեցե՛ք, ընկեր բժիշկ, — ասաց Լուսիկի
մայրը և սկսեց հիվանդի վերմակն ուղղել:

Տան դուռը բացվեց և ներս մտավ Լուսիկի յեղ-
բայրը՝ փոքրիկ Պետիկը: Նա հազել էր հոր վերաբ-
իուն, ձեռքն էր առել նրա ձեռնափայտն ու աչքին դրել
բապիկի ակնոցները:

Բոլորը փոթկացին, բայց Պետիկը չչիոթվեց: Բը-
ժըկի նման գլուխ տվեց և ժպտալով ասաց.


— Բարե՛ ձեզ. հիվանդս ինչպե՞ս ե:

Փոքրիկ բժիշկն աթուը քաշեց մահճակալի մոտ.
յերկու անգամ հազար ու նստեց: Նա ժամացույցի տեղ
դրանից հանեց տատիկի ասեղնատումիը, բռնեց հի-
վանդի յերակը, հանեց իր յերկար գրչատումիը, վորի
մի ծայրը դրեց իր ականջին, իսկ մյուսը՝ Լուսիկի
հրձքին և ուշի ուշով հիվանդին քննեց:

— Լուսիկս ինչպե՞ս ե, — հարցրեց մայրը ժպտա-
լով:

— Վոչինչ, միայն չմրսեցնեք, — պատասխանեց
փոքրիկ բժիշկը, անցալ սեղանի մոտ և սկսեց զեղա-
տոմս գրել:

— Տեսեք, յերկու տեսակ դեղ եմ գրել. մեկը



քաղցրավենի, վորը կընդունի ամեն անկամ յերեք
թեյի գդալ, առավոտ, յերեկո՝ թեյից առաջ, իսկ
մյուսը՝ մոմպասի կլոր հարեր են, վոր յերկու ժամը
մեկ՝ չորս-չորս հատ բերանն ե դցելու:

— Մոմպասի հարերը շատ յեղան, ընկե՛ր բը-
ժիշկ, — ծիծաղն հաղիկ զսպելով՝ ասաց մայրը:

Պատիկ բժիշկը նեղն ընկավ, բայց պատասխանն
իսկույն գտավ.

— Բ... բ... մոմպասի հարերը շատ ողտակար
ու քաղցր են, իսկ յեթե Լուսիկը չկարողանա բոլորն
ընդունել, կեսը թող իր յեղբորը՝ Պետիկին տա:

Բարձրացավ մի անասելի ծիծաղ ու քրքիչ:
Հանկարծ գուռը բացվեց ու ներս մտավ բժիշկը:
Մեր Պետիկն իր զեղատումն առավ ու պո՛ւկ...



16. ԱՂՎԵԱԼ

Աղվեսն յեկավ բարձր սարից,
Հարցմունք արավ լիքը թառից.
— Մեծ խորող ե հարկավոր ինձ:
Քաղցած աղվեսն, աղին ծաղիկ:

Աղվեսն հագել քուրքը դեղին,
Գտուտ կըգա շուրջը դեղին,
Զուր կտրվեց տատիս լեղին:
Դեղին աղվեսն, աղին ծաղիկ:

Աղվեսն ասամ պառավ տատին.
— Մտիկ չեմ տա ձեռիդ փետին,
Կարոտել եմ թմփլիկ ճուտին:
Անվախ աղվեսն, աղին ծաղիկ:

Աղվեսն յեկել, նստել դեղին,
Յերկար աղին ծոել կվին:

Աչք ե ձգել մեր խորողին:
Են գող աղվեսն, աղին ծաղիկ:

Մին ել կանչեց տատոս պառավ.
— Ամա՞ն, հասե՞ք, տարա՞վ, կերա՞վ...
Գլխիս ես ի՞նչ փորձանք բերավ
Անտեր աղվեսն, աղին ծաղիկ:

Ա՛յ իմ խորող, կարմի՛ր խորող,
Ման կզայիր գոռող-գոռող.
Փետուրդ արավ վողջ դար ու փռ
Են չար աղվեսն, աղին ծաղիկ:

ԲԱՌԱՐԱՆ

1. Ազի— պոչ:
2. Խորող— աքլոր:

ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿ

Աղվես, աղվես,
Աղով աղվես,
Մաղով մաղվես,
Դեղով դաղվես,
Գետնին թաղվես,
Պատից կախվես:

17. ԶՂՋԻԿԻ

Զղջիկը մկան մարմին ունի, թոչունի թեփեր, այդ
պատճառով զժվար ե վորոշել—նա մո՞ւկ ե, թե թըռ-
չուն:

Մի անգամ ահա կենդանիների կառավարությունը
հարկ գրեց իր հպատակների վրա: Դրանց թվում և
մկների:

Յեկ յերբ հարկահավաքները, տուրք հավաքելով,
գնացին չղջիկի մոտ, սա բարկացավ և հրաժարվեց
հարկ տալուց:

— Յես մո՞ւկ եմ, — ասաց, — վոր յեկել եք ինձ
մոտ: Զե՞ք տեսնում՝ թռչուն եմ...

Ու ցույց տվեց թհերը:
Հարկահավաքները նրա թհերը տեսնելով՝ հեռա-
ցան, մտածելով, վոր նա, իսկապես, մուկ չի, այլ
թռչուն ե:



Անցավ ժամանակ: Կառավարությունը հարկ դրեց
և թռչունների վրա:

Հարկահավաքները, հարկ հավաքելով, դնացին
նորից չղջիկի դուռը:

Չղջիկը սաստիկ բարկացավ.
— Կո՞ւյր եք, ինչ ե, — ասաց: — Զե՞ք տեսնում՝
յես մուկ եմ:

Ու ցույց տվեց ատամները:
Հարկահավաքները, նրա ատամները տեսնելով, հե-
ռացան, մտածելով, վոր նա իսկապես թռչուն չի:

Յեվ այսպէս չղջիկն աղատվեց հարկից: Բայց վոր-
պեսզի ել հարկահավաքների ձեռքը չընկնի, նա ցերեկ-
ները պահպատմ ե քանդված պատերի ճեղքերում ու ծա-
ռերի փշակներում, իսկ գիշերը դուրս ե գալիս վորսի,
վոր իրեն վոչ վոք չտեսնի:



Ա. Ա. Պուշկին

18. Ա Ռ Ա Վ Ա Տ

Բայցվեց այդը արևելքում
վառ ու զառ,
Գետի վրա լույսը հանդավ
Մեղմաբար:

Ծաղկանց վրա ցողն ել իջավ
Դաշտերում,
Շարժվեց հոտը սեղ ու կանաչ
Հանդերում:

Ճամբար ընկան մեղ ու մշուշ
Դեպ ամպեր,
Սագերըն ել յերամ-յերամ՝
Դեպ մարգեր:

Զարթնեց դյուզը, դաշտ են մարդիկ
Շտապում,
Յելավ արև, իջավ յերկրին
Խնդություն:

19. ՄԵՐ ՇՈՒՆԸ

Մենք շատ չեր ենք ունեցել, բայց մի շուն ունեցինք, վոր գյուղի մեջ մի հատ եր: Ուրիշ շուն եր մեր շունը, հասկացող, խելոք, հավատարիմ: Լավն եր, շատ լավն եր, իսկի չեմ մոռանում մեր Մշկոյին:

Առավոտյան կովերին նախրամեջ տանողը մեր Մշկոն եր. յերեկոյան նախրից տուն բերողը՝ մեր Մշկոն եր:

Հաց թխելու ժամանակ հավ ու ճիվ տանից դուրս անողը՝ մեր Մշկոն եր:

Յերեկոյան գեմ հավ ու ճիվ, թխսամորն իր ճուտերով ներս անողը՝ մեր Մշկոն եր:

Մայրիկս մենակ կին եր, բայց շատ ժիր: Առավոտը վաղ վեր եր կենում, տան գործն անում, կերակուր յեփում, հաց թխում: Փոքրիկ յեղբորս ել ծիծ եր կուր յեփում, պատրամ մեր Մշկոն եր:

Մեր Մշկոն դունը չեր պառկում, դես-դեն չեր ընկնում, բարձրանում եր կտուրը, պառկում կտրան ծերին, առաջին թաթիկները յերկարացնում եր զեպի յերդիկը, գլուխն ել դնում եր թաթերի վրա ու պառկում, ականջը ձենի պահած:

Ճենց վոր յեղբայրս զարթնում եր ու լաց լինում, շունը բարձրանում եր հետեւի վոտներին, յերեսը դեմի կալն եր դարձնում ու հաջում, կոնծկոնծում:

Մայրս ասում եր.

— Դե՛, յես դնամ, չան հաջոցը գալիս ե, յերեխան դարթնել ե, լաց ե լինում:

Այսպէս խելոք, հասկացող, հավատարիմ շուն եր Մշկոն:

20. ՍԵԿՐԵՏԸ ՅԵՎ ՍԼՈՒԺԲԱՆ

1

Զմռան մի ցուրտ առավոտ սահմանապահ Լեվչենկոն անտառի միջով գնում եր դեսպի պահակատեղը: Նա իր ծոցում պահել եր լրատար աղավնուն, վորի անունը Մեկրետ եր: Հանկարծ Լեվչենկոն կանգ առավ: Ծառերի արանքով գաղտագողի անցնում եր մի մարդ: Նրա կողքից գնում եր շունը: «Լրտես ե», — մտածեց Լեվչենկոն և անմիջապես բարձրացնելով հրացանը՝ գոչեց: — Կանգնի՛ր, ձեռքերդ վե՛ր:

Լրտեսը վախեցավ, ձեռքերը վեր բարձրացրեց, բայց Լեվչենկոն չնկատեց, վոր նա վերարկուի թելնոցում ատրճանակ ուներ պահած: Լրտեսը կրակեց Լեվչենկոյի վրա: Լեվչենկոն վիրավորվեց վոտքիդ և վայրընկավ: Լրտեսն սկսեց փախչել:


Լեվչենկոն պառկած տեղից սկսեց կրակել լրտեսի վրա: Լրտեսը վայր ընկավ:

Լեվչենկոն իսկույն գրեց մի տոմսակ. «Սպանեցի լրտեսի: Ինքս ել վիրավորված եմ: Շատպ ծի հասցերք: Լեվչենկո»: Ապա նամակը կապեց աղավնու վոտքից և բաց թողեց: Լրտեսը, վորն իրեն մեռած եր ձեղացրել, կրակեց և սպանեց լրատար աղավնուն:

Աղավնին վայր ընկավ հենց Լեվչենկոյի մոտ:


2

Կրակոցները լսեցին Լեվչենկոյի ընկեր սահմանապահները, վորոնք մոտերքում պատրաստ կանգնած են յին: Ծառերից կապված եյին ծիերը, իսկ նրանց մոտ վազվզում եր շունը, վորի անունը Սլուժբա յեր: Շունն սկսեց անհանդիստ շարժումներ անել: Մինչեւ սահմանապահները կնստեյին ծիերը, Սլուժբան կատաղի արագությամբ ոլացավ դեպի անտառի խորքը: Սլուժբան հոտոտելով գտավ վիրավոր Լեվչենկոյին:



Լեվէնկոն սղանված տղավնին՝ տվեց Սլուժբային
և առաց.

— Տար մերոնց, միայն վորքան կարող ես, չո՞ւտ:
Սլուժբան աղավնին բերանում սլացավ առաջ:
Սլուժբան աղավնին տեղ հասցրեց: Նա պահակա-
տեղի սահմանապահներին հասավ ճանապարհի կեսին:
Պահակատեղի հրամանատարը կարդաց տոմսակը:



— Իմ հետեւից, — գոչեց նա սահմանապահներին
և առաջ սլացավ:

Սլուժբան սահմանապահներին բերեց լրտեսի հետ-
քերով: Սահմանապահները շրջապատեցին լրտեսին և
չորս կողմից գոչեցին.

— Զեռքերդ վե՛ր:

Լրտեսը տեսնելով, վոր իբրկության հույս չկա,
հանձնվեց:

Լեվէնկոյին տարան հիվանդանոց: Շուտով նա ա-
ռողջացավ:




Պիոներական ջոկատը հերոս Լեվէնկոյին նվիրեց
լով վարժեցրած լրտեսը մի աղավնի: Լեվէնկոն սի-
րով ընդունեց այդ նվերը և անունը կրկին Սեկրետ
դրեց:



ԲԱՌԱՐԱՆ

1. Լրտեսը — լուր, տեղեկություն տանող:
2. Գաղտագողի — ծածուկ, թագուն:



21. ՓՈՔՐԻԿ ԳՈՐԾԱԿԱՍԱՐԸՆ

- Տատիկ ջան, արի խաղանք, — խնդրում ե փոքրիկ Յերվանդը:
- Լավ, խաղանք, — համաձայնեց տատիկը:
- Կոռպերատիվ խաղանք հա՞մ, տատիկ:
- Լա՞վ, կոռպերատիվ խաղանք:
- Ու Յերվանդը վաղեց, քաշ տվեց մի յերկու աթոռ, չարեց իբար կողքի:
- Ես սեղանը:
- Վրան գարսեց տուփեր, գրքեր, լրագրեր, քըռչ տիկնիկը, իր հոլը, ուրիշ խաղալիքներ, ելի տուփեր, ելի գրքեր, մի յերկու հատ ել շիշ, իր խնձորը, վորեն չեր կերել, հետո իր փոքրիկ գլչահատը:
- Կոռպերատիվը սկասած եր:
- Վաղեց, կողքի սենյակից բերեց տատիկի մեծ, գունավոր թաշկինակը, գողնոցի պես կապեց առաջն ու կանգնեց:
- Շաքար ունե՞ս, ընկե՞ր, — հարցրեց տատիկը:

- Ինչքան քեֆդ ուղի, մայրիկ, — պատասխանեց գործակատարը:
- Լա՞վ, մի հինգ մետր տուր:
- Փոքրիկ վաճառողի ծիծաղը յեկավ:
- Ներեցեք, ընկե՞ր, մենք շաքարը մետքով չենք ծախում, — ասաց նա քաղաքավարի կերպով:
- Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:
- Կիլոյով:
- Կիլոյո՞վ: Հա, ճիշտ վոր, — ասաց տատիկը: — Դեհ, խնդրեմ, ինձ մեկ կիլո շաքար տուր, մեկ կիլո ել զինի:
- Ներեցեք, մայրիկ, — ժպտաց գործակատարը, — մենք գինին կիլոյով չենք ծախում:
- Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:
- Գինին ծախում ենք չըով:
- Շշո՞վ: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերկու շիշ գինի տուր, տասը շիշ ել ձու:
- Փոքրիկ վաճառողն այս անդամ արդեն փոթկաց:
- Ներեցեք, ընկե՞ր, մենք ձուն չըով չենք ծախում:
- Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:
- Զուն ծախում ենք հատով:
- Հատո՞վ: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ տասը հատ ձու տուր, յերեք հատ ել կաթ:
- Ներեցեք, ընկե՞ր, կաթը մենք հատով չենք ծախում:
- Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:
- Կաթը ծախում ենք բաժակով:
- Բաժակո՞վ: Հա, ճիշտ վոր: Դեհ, ինձ յերեք բաժակ կաթ տուր, վեց բաժակ ել լուցկի:
- Յերվանդը ծիծաղից թուլանում եր:
- Ներեցեք, մենք լուցկին բաժակով չենք ծախում:
- Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:
- Լուցկին ծախում ենք տուփով:


— Տուկո՞վէ Հա, ճիշտ վոր: Այսոր ինչքա՞ն բան
սովորեցի: Դեհ, ինձ վեց տուփ լուցկի տուր, չորս
տուփ ել կարմիր բողկ:

— Ախար, ընկեր, — ծիծաղում ե վաճառողը, —
ո՞վ ե լսել բողկը տուփով ծախեն:

— Հապա ինչո՞վ, — հարցրեց տատիկը:

— Բո՞ղկը, բո՞ղկը... կմկմաց Յերվանդն ու չիմա-
ցալ, թե ինչով ծախի բողկը:

ՀԱՆԵԼՈՒԿ. — Աման ունեմ մի պուճուր,
մեջին յերկու գույնի ջուր:



22. ՀՈՎՎԻ ՀՐԱԺԵՇՔ

Մնաք բարով, գուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:
Մենք կգանք ձեզ մոտ նորեկ գարունքին,
Յերբ գարթնեն ուրախ յերգերը կրկին,
Յերբ վոր սարերը զուղվեն կանաչով,
Յերբ վոր ջրերը վաղեն կարկաչով...
Մնաք բարով, գուք, արոտներ սիրուն,
Ամառն անց կացավ, հոտն իջնում ե տուն:



23. ՅԵՂԱՅՐԻԿՆԵՐ

Տե՛ս սևամորթ մայրիկին՝
Ի՞նչ ե յերդում բալիկին.

— Գիշեր ե գալիս,
Քուն դնեմ բալիս.
Հայրիկդ չկա—
Նա դեռ ուշ կգա.
Ոյլա՛:

Յերբ դու մեծանաս,
Շուտով կիմանաս,
Վոր լայն աշխարհում
Մենակ չես ապրում.
Ոյլա՛:

Ընկերներ ունես
Մի հսկա բանակ.
Քնիր, իմ բալիկ,
Զես մեա մենակ:




Տե՛ս դեղնամորթ մայրիկին՝
Ի՞նչ ե յերգում բալիկին.

Զի՞ն-ձի՞ն
Յո՞ւ-ձի՞ն,
Ի՞նչ ծանը բեռ ե
Դրած իմ վզին:
Մեծացիր, բալիկ,
Որելը գալիք
Զեն լինի այսպես.
Յեղբայրներ ունես
Քեզ կուռ ու կոնակ...
Մենակ չես, մենակ...
Զի՞ն-ձի՞ն
Յո՞ւ-ձի՞ն...

Տե՛ս սպիտակ մայրիկին՝
Ի՞նչ ե յերգում փոքրիկին:

Բա՞յ-բա՞յ,
Ի՞մ լենիկ,
Շուտով մեծանաս



Ուժեղ պատանի,
Բանվոր կդառնաս.
Բայց չմոռանաս—
Յեղբայրներ ունես,
Նրանց ել պիտի
Լույս աշխարհ հանես...

Բա՞յ-բա՞յ,
Իմ բալիկ,
Բա՞յ-բա՞յ,
Իմ լենիկ:

24. ԴԺՎԱՐ ԱՇԽԱՏԱՆՔ

Քեռի թոմի ընտանիքը մեծ ե, կարիքն—անպակաս և Նո ծանը աշխատանքով ե վաստակում իր որվա ապրուսոր:

Քեռի թոմը ծխնելույղ մաքրող ե. նա իր տղային, վուրբիկ Զիմին, ընտելացնում ե այդ աշխատանքին:



Հատ կցանկանար նրան աշխատանքի չտանել, բայց ըստիպված եր:

Ամբողջ որը նրանք աշխատում են բարձր շենքերի կտուրների վրա: Նրանք յերկուսն ել սև են, ինչպես ծխնելույզի պատերը:

Աշխատանքը ծանր է, իսկ վիճակի համար ուղղակի անտանելի:

Քեռի թոմը յերկար պարանը կապում է Զիմի մեջքին և իջեցնում նրան ծխնելույզի մեջ: Զիմը փոքրիկ թաթիկներով մաքրում է ծխնելույզի պատերի մուրը:

Ծխնելույզից Զիմը դուրս է գալիս բոլորովին սեացած ու մրոտված:

Նա ազահարար սկսում է չնչել մաքուր ողբեր:

— Այստեղ լավ է, Հա՞մ, — հառաչում է Հայրը:

— Շատ լավ է, — ասում է Զիմն ու աշխատանքը ուրախ յերեւալ:
Աշխատանքը ծանր է, բայց Զիմն անտրասունջ ողնում է հորը:


ԲԱՌԱՐՄԵՆ

1. Վաստակել — ձեռք բերել, ստանալ:
2. Ընտելացնել — վարժեցնել, սովոր դարձնել:
3. Անտրասունջ — առանց տրանջալու, դժոհելու:

25. ՏԵՐԵՎԱԹԱՓ

— Այ վոքրիկներ, այ սիրուններ, —
Ասավ քամին տերեներին.
— Աշունն յեկավ, մոտ ե ձմեռ,
ի՞նչ եք դողում ծառի ծերին:
Վոսկի, դեղին, վառ ծիրանի
Գույներ հագեք խայտաբղետ
Ու ձյուղերից ձեր մայրենի
Յեկեք ինձ հետ, վախեք ինձ հետ...
Յեկեք տանեմ հեշտ ու անթե,
Անհետ ճամփով, անհայտ տեղեր,
Զեք իմանա այսուհետեւ
Ել ինչ ե դող, ինչ ե ձմեռ...

Տերեները հենց լսեցին,
Նախշուն-նախշուն դույներ հագան,
Սվավալով տիսուր յերդեր՝
Քամու թևին թռան փախան:



26. ՀԵՌԱԽՈՍՔ

Տանը մարդ չկար: Լեիկը մնացել եր մենակ: Հանկարծ հայրիկի սեղանի մոտ կախված հեռախոսը ծընդծընզաց:

Լեիկն ուրախացած բարձրացավ աթոռի վրա և հեռախոսի խողովակը վերցրեց:

«Դը՛ռը», — լսվեց խողովակի միջից:

Լեիկն ականջ դրեց:

Վոչ վաք չխոսեց: Միայն «դըռոսոց» եր լսվում: Լեիկը ժպտաց և հայրիկի նման հարցրեց.

— Կենտրո՞ն... կենտրո՞նն ե:

Խողովակի միջից լսվեց.

— Այո՛:

Լեիկը նորից ժպտաց ու մտածեց, թե ի՞նչ ասի ու միտքն ընկալ մորաքրոջ հեռախոսի համարը:

— Տվեք, խնդրեմ, 16:

— Պատրաստ ե, — պատասխանեցին խողովակից Նորից լսվեց, «դըռոսո»...

— Մարգոյանի բնակարանն ե. ո՞վ ե խոսում, — հարցրեց մեկը:

Լեիկը ձայնից ճանաչեց մորաքրոջը: — Յես եմ խոսում, մորաքրույթը — լեիկը: — Ի՞նչ կա, լեիկ ջան: Լավ ես: — Լավ եմ, մորաքրույթը: Դու ի՞նչպես ես: — Լավ եմ, — ծիծաղեց մորաքրույթը: Լեիկը մտածեց՝ ել ինչ ասի ու հիշեց, թե ինչպես մայրը յերբեմն խոսում եր, և ասաց: — Եսոր, մորաքրույթը, համեցեք մեղ մոտ ճաշին Անպատճառ: Թող Անիկն ել գա, Նինելն ել, Նինելի հայրիկն ել... Զուշանաք հա՛. կսպասենք... Վերջացրեց, խողովակը կախեց և ուրախ-ուրախ իջառ աթոռից: Նա ուրախ եր, վոր կարողացավ առանց մայրիկի և հայրիկի ողնության խոսել: «Իսկ մայրիկն ասում ե, թե չես կարող մենակ խոսել... Տեսա՛ր»...

Ճաշին մորաքրույթը Մարոն, նրա աղջիկները՝ Անիկը, Նինելը, և Նինելի հայրիկը յեկան:

— Ես ի՞նչպես ե, վոր մեղ հիշեցիք, — ասաց մայրիկը:

— Հրավիրեցիք ճաշի, մենք ել յեկանք, — պատասխանեց մորաքրույթը Մարոն:

— Յե՞ս եմ հրավիրել, մայրիկ, յես, — ասաց լեիկը: — Հեռախոսով հրավիրեցի:

27. ՑՈՐՆԱՏԵՐՆ ՈՒ ԶԱՂԱՅՊԱՆԸ

1

Մեկը ցորեն տարավ ջաղաց, եղ ցորենից ալյուր աղաց. Ջաղացպանն ել բաղարջ յեփեց, թոնրից հանեց, մեջտեղ զրեց. — Արի պատմենք մի-մի լավ ըսն. Ամը լինի սուր, դուրեկան,

Ես բաղարջը թող նա ուտի.
Ու չնայենք դորթի, սուտի:

2

Յորնատերը՝ թե յես կասեմ.
Զաղացպանը՝ թե կլսեմ:
— Մենք ունեյինք մի մեծ աքլար,
Վորի նմանն մի տեղ չկար.
Հերու եր, թե մեկել տարին,
Քեռիս հեծավ եղ աքլարին,
Դնաց լոռի՝ ցորեն բերի:
Ճանապարհին չի նկատում—
Մի գայլ ձիու կողքն ե ուտում,
Գնում քեռիս ուռ ե բերում.
Ու աքլարի կողը գործում.
Նորից հեծնում եղ աքլարին,
Ման ե գալիս կլոր տարին,
Ռւ հազար փութ ցորեն բարձած,
Ինքն ել բեռան վրա նստած՝
Թալիս կանգում ե մեր գոտնի:
Մենք շինեցինք մի յելարան,
Յելանք, քեռուս ներքե բերինք,
Բեռով ցորենն ել ներս դրինք:
Են ցորնիցն ե, վոր դու ահա
Ես բաղարջն ես թիել հիմա:

3

Զաղացպանը՝ թե յես կասեմ.
Յորնատերը՝ թե կլսեմ:
— Մենք ունեյինք մի մեղրաճանճ,
Համ պող ուներ, համ ել ականջ.
Մեկ որ ճանճը փախավ տանից,
Հորս պարապ արավ բանից.
Հայրս քրտնած դարձավ գեղը,

Մորիցս առավ մեծ ասեղը,
Տարավ տնկեց գոմի կտրան
Ու գույդ վոտով յելավ իրան.
Տեսավ հեռուն՝ դաշտի միջին,
Վոր գութան են լծել ճանճին:
Ծուն տնովի դաշտ վազեցինք,
Պոչից բոնած տուն քշեցինք:
Տրորել եր ճանճն իր ուսը,
Զարդեց մայրս տան ընկուղը
Ու ընկուղից հանած յեղը,
Քսեց ուսի ցաված տեղը:
Իսկույն ուսից բուսավ մի ծառ,
Ծառին իջավ ագռավը թառ.
Մի հողի կոշտ քեռիս առավ,
Ես ագռավին վրա արավ.
Կոշտը ցրվեց, դարձավ մի հող
Մի որավար վարելահող:
Յերբ վոր յելավ, հասավ մարտը,
Յորեն արինք մենք են արտը.
Մտանք հունիս, ընկավ քաղը,
Յես վեր առա սուր մանդաղը,
Մտա արտը ու քաղեցի,
Բայց դեմ ընկա մի մեծ քարի—
Քարի վրա փորված գրի.
«Այ ցորնատեր, վայ քո բանին,
Բաղարջը տուր ջաղացպանին»:
Ցորնատերը դեմքը կախած,
Ալյուրն առավ, գնաց քաղցած:

ԱՌԱՅՈՒՄ — Սուտ ասողի տունը կրակ ընկավ,
Վոչ վոք չհավատաց :

28. ՀԵՐՈՍ ՀՈՎԻԿԻ

Բասարդեչարի շրջանի յայլաներում հանկարծակի ստոնամանիք սկսվեց և ձյուն տեղաց: Մեծ Ազիղլու դյուղի կոլտնտեսականները շատ անհանդատացան: Նըրանց անասունները սարումն եյին: Թե անասունների և թե կոմյերիտական հովիլ Այդին Մամեդովի վիճակը լուրջ եր:

—Կկոտորվեն անասունները, —ասում եյին նրանք:
— Այդինն ինքն ել կսառի մինչև ողնության հասնենք, — խոսում եյին մյուսները:

Մինչ այդ, Այդին Մամեդովը դիմանալով բուք ու բորանին, հաջողությամբ դյուղ իջեցրեց իր նախիրը: Կոլտնտեսականներն ուրախ դիմավորեցին Այդին և գովլեցին նրա քաջությունը:

Յերբ անասունները դոմերն արին, պարզվեց, վոր կովերից մեկը չկա:

Հովիվն առանց հանդատանալու նորից սար բարձրացավ: Յերկար վորոնելուց հետո գտավ կովը ձյան տակ:

Նա կրկին դյուղ վերադարձավ, անկողին վերցրեց ու նորից սար դնաց:

Դիշերը մնաց կովի մոտ, տաքացրեց ու կերակրեց նրան: Յուրաքանչյուր մտտները, սակայն Այդինը դիմացավ և փրկեց կովին:

Հերոս հովիլին պարգևատրեցին և ուղարկեցին բուժվելու:

Ժողովուրդը գնահատեց իր արժանավոր զավակին: Այդին Մամեդովը Խորհրդային Հայաստանի աշխատավորության կողմից ընտրվեց Խորհրդային Միության Գերադույն Խորհրդի ղեպուտատ:

ԲԱՌԱՐԱՆ

- Վիճակը լուրջ եր— դրությունը վատ եր:
- Վորոնել— փնտրել:

29. ԴԺՎԱՐ ՏԱՐԻ

Վարի, գութան ջան, վարի,
Շատ և գժվար ես տարի:
Պապին տարան քյոխիլի դուռ,
Հարկ են ուղում.— Տուր, հա՛ տուր...
— կտամ, քյոխվա, փող չունեմ...
— Զունե՞ս, Շեկոն կտանեմ:
— Աման, քյոխվա, քեզ զուրբան,
Շեկոն գնա թող գութան,
Գարնան անենք վար ու ցանք,
Կալը կալսենք բերենք, տանք:
Գարունը յետ զառավ ել,
Գութան լծվեց՝ հորովել...
— Վարի, գութան ջան, վարի,
Դատենք ցորեն ու գարի,
Տանենք, ածենք քյոխվի փեշ,
Վոր չաանի մեր գոմեշ:

ԲԱՌԱՐԱՆ

- Քյոխվա— տանուտեր՝ հին դյուղում:
- Կալսել— ծէծել (հայահատիկը):

30. ՔՆԱՐԻԿԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ

1

Թագավորի ժամանակ հայրս գրաշարեր, իսկ ժայռը՝ դերձակուհի: Հայրիկս Հեղափոխական աշխատանք եր տանում: Թես տասներկու տարեկան եյին յերբ այս դեպքը պատահեց:

Մի յերեկո հայրս ուրախ-ուրախ ներս մտավ ու

Բորս ականջին շշնջաց Դայդ Ֆամանտի յետ ննջում են
յի) :

— Ճարեցի. վաղը հազար թռուցիկ ենք տպելու;
Մեր ընկերներն այդ թռուցիկները կցրեն բանվորնե-
րին:

Նա արձճե տառերը թափեց սեղանին:

Յես գլխի ընկա. այդ տառերով հեղափոխական
բանվորները թռուցիկներ եյին տպելու թագավորի

Քնեցի: Մեկ ել քնիս մեջ զդացի, վոր մեկը շար-
ժում ե բարձս: Աչքերս բաց արի — տեսնեմ մայրիկս
սիրթնած կանգնել ե գլխավերեսու ու ինչ-վոր բան ե
թագյնում բարձիս տակ: Հարեան սենյակում ծանր
վոտնաձայն լսեցի:

— Մայրիկ, — հարցնում եմ կամացուկ, — ի՞նչ ե
պատահել:

— Վոչինչ, դու քնիր, աղջիկս, տունը խուզարկում
են: Ո՞վ գիտե, դուցե թե քեզ ձեռք չտան...

Չեռքս կոխեցի բարձիս տակ — տեսնեմ կապոցով
տառեր են:

Ի՞նչ անեմ, — մտածում եմ: — Յեթե գտնեն՝ վայ
մեզ: Պահեմ, բայց վո՞րտեղ: Պահարանո՞ւմ: Վառա-
րանո՞ւմ... իսկ յեթե գտնեն...

2

Հանկարծ գլխի ընկա: Լուսամուտում դրված ե կա-
թով լիքը կճուճը: Մոտեցա մի լավ խմեցի կաթը, կը-
ճուճում կաթը պակասեց, և յես տառերը կճուճի մեջն
ածեցի: Հանգստացա ու նորից պառկեցի իմ մահճակա-
լում:

Ներս մտան վոստիկանները, տակն ու վրա արեցին,
ինձ ել տեղիցս հանեցին: Յերբ քրքրում եյին անկո-
ղինս, մայրս դողում եր, իսկ հայրիկս դունատված
կանգնել եռ:



Յան չդտան և դժգոհ հեռացան:

— Այ քեզ բան, — ասաց հայրիկը ժպտալով. —
տառերը կարծես թե չքացել են:

Յես քըքջացի ու գոռացի.

— Վոչ թե չքացել են, այլ կաթի մեջն են տառերը:
Հայրիկս վազեց, վերցրեց ծանր կճուճն ու հարց-
րեց.

— Ուրեմն, Քնարիկ, դո՞ւ յես այստեղ թաղցրել:

Իմ ուրախությանը չափ չկար:

Մայրիկս անվերջ համրուրում եր ինձ, իսկ հայրի-
կըս սեղմեց կրծքին ու ասաց.

— Ապրես, աղջիկս, դու լավ հեղափոխական կը-
դառնաս:

ԲԱՌԱՐԱՆ

1. Գրաշար — տպարանում տառերը շարող:

2. Թռուցիկ — անցյալում հեղափոխական բնույթի կոչ՝ թեր-
թիկներ:

31. ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

Յելի՛ր, ում կյանքը անիծել է,
Ով ճորտ ե, մերկ ե և ստրուկ:
Արդեն վառվում են մեր սրտերը,
Արդեն կովի յենք մենք ձգտում:

Այս հին աշխարհը կփորենք մենք
Մինչև հիմքերը և հետո
Մեր նոր աշխարհը կշինենք մենք,
Ուր վոչ ստրուկ կա, վոչ դժգոհ:

Սա յե վերջին կոփվը
Յեվ պայքարը մեր մեծ,
Ինտերնացիոնալը
Աշխարհը կիրկե:

32. ԱՅԴ ԱՆՈՒՆԸ ԶՆՉԵԼ ԶԻ ԼԻՆԻ

(Խոալական բանտում)

Մեկ անգամ ինձ ձերբակալեցին և ուղարկեցին
բանտ: Շատերի հետ բանտարկված եր նաև մեկ զին-
վոր: Գիշերը նա շատ անհանդիստ քնեց: Շատ եր դես-
տեն դնում և սեղանն ու աթոռը շարժում: Հուսարացին յես նրան հարցրի.

— Ինչո՞ւ եյիր գիշերն անհանդիսու՞ս:
Նա չպատասխանեց, մեղմ ժպիտով նայեց ինձ ու
վլխով ցույց տվեց դեսլի պատը:
Պատի վրա խոշոր տառերով գրված եր,
— Կեցցե՞ լենինը:
— Ո՞վ ե գրել, — հարցրի նրան:
— Յես, — հպարտությամբ պատասխանեց նա:



Շուտով զարթնեցին և մյուս բանտարկյալները՝
Բոլորը կարդացին զինվորի գրածը: Ներքին մի լուր
Հրճվանքով նրանք հայտնում եյին իրենց խոր հարդան-
քը դեպի այդ անունը:

Քիչ հետո ներս մտավ բանտի վերակացուն: Նա
նույնպես կարդաց պատի վրա գրածը:

— Ո՞վ ե գրել, — զարդույթով հարցրեց նա:
Բոլորը լուր եյին:

Վերակացուն բերել տվեց մի ներկարոր, վորը
ներկով ծածկեց գրված բառերը:

Յերբ չօրացավ ներկը, նրա տակից նույնությամբ
կարդացվում եր.

— Կեցցե՞ լենինը:

Կատաղած վերակացուն կրկին անգամ ներկով
ծածկել տվեց գրվածը:

Սակայն ներկը չորանալուց հետո նորից պարզ
կարդացվում եր.

— Կեցցե՞ լենինը:

Կատաղությունից իրեն կորցրած վեր է կացում

այս անդամ քարտաշ բերել տվեց և Հրամայեց քերել գրածը:

Քարտաշը քերեց պատին դրված տառերը: Տարելը փոս ընկան և չնայած գույնը դցեցին, բայց այս անդամ ավելի պարզ եյին կարդացվում.

— Կեցցե՛ լենինը:

Չենվորը ժպտաց և հրճվանքով բացականչեց.


— Այդ անունը ջնջել չի լինի:

ԲԱՌԱՐԱՆ

1. Ջերբակալել — բոնել, բանտարկել:
2. Հրճվանք — ուրախություն, ցնծություն:

33. ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԸ ՑԱՐԻՑԻՆՈՒՄ

Յարիցինը չըջապատված եր թշնամիներով: Կարմիր բանակայինները կովում եյին հերոսաբար: Նրանցից ամեն մեկի մեջ կար միայն մեկ ցանկություն. Յարիցինը չհանձնել թշնամուն:




Յեթե Յարիցինը հանձնվեր թշնամուն, այդ նշանակում եր՝ ճանապարհը դեպի Մոսկվա փակել և ժողովրդին թողնել առանց կենսամթերքի:

Կարմիրները հավաքելով իրենց ամբողջ ուժերը, պաշտպանեցին Յարիցինը սպիտակներից: Սարսափելի դժվար եր այդ, վորովհետեւ թշնամու բանակն իր թվով տասն անգամ շատ եր կարմիրներից:

Սակայն ընկեր լենինը գիտեր՝ ով կարող ե փրկել Յարիցինը: Նա այնտեղ ուղարկեց ընկեր Ստալինին:

Ստալինը կանգնեց մեր զորքերի գլուխը, իսկ նրա ոգնականները յեղան Վորոշիլովը և Բուդյոննին:

Ստալինը և Վորոշիլովն անմիջապես անցան կռվի դաշտը:



Ընկեր Ստալինը յեվ ընկեր Վորոշիլովը Յարիցինի
խամատներում

Յերբ մարտիկները տեսան Ստալինին և Վորոշիլովին, նրանց ուժը կրկնապատկվեց: Նրանք մոռացան քաղցն ու հոգնածությունը: Ամեն մեկը պատրաստ եր կովել թշնամու տասը զինվորի զեմ:

Յդիզմ հպետամշ — Եղեռմի զվրտողք վերա —
: զվեզմ զբ զվիսլվասման մդիզյ
: Եղբա Յզավ : զվիզ տաշ նպանափոշ ժողոմզ : մմզդ
Քյուեակ կտավիս զվիզ Եղեղասը զգնմտ զվումտաբոկ
: մքնակ պատ ուտ զվումտամոկ զվիտ ետի մմզդուկտասովտափ
: զուսթ ուտան Ֆյզանակ մմզդուտապարտամշ Կ միսլիսման մդիզյ
... մմզդուեակ ... ժեզիկմֆ —
• Յզուկ կրաբ
Ենտ Եղիս նվերնակ պմտ վմզգատարտամոյ քմտկուտշ
շմզդեամք վիսի մդ յրազզմ տղ տպշ վմզգմտատազտարտամշ
վմզգուրտամս մվրտոկ յրազսնախ վմտազ : զումտամոկ
իտիզմ միսլիսման յիլիկ մտազուրտամշ վտակտազ
: մմզդուիտկուտում մվրտոկ զվիզ յրաբ
տողով Կ յրազտուչտու նզումզ : մմզգուդմզ Կ ժիտակ
զվիզ մդմզ ովեռմայտավին մմզգմտկուտուի Նմ՛՛
Ֆնիմզմիտի օտիտմն վմզգյուտավիսո զվիզ Եղոյուի ժզմանի
մմզդչվիտու Նունոյ յրամզգունախ ուտիր կով մմզգչվի
բոկոզմ մսիտմի զվիզ Եղիսուն ծզր վմզգունախ
: մմզցնետզ զվիրմզմունու իսիթի
Քյյր զվիզ Եղիկոտրակ յրազտումտակ մդիզյ
: (Նոմենզվլուտամ բրմտ) մմտնոմ զվեզմոց Եղիտմն
Քյյմնեան լուզգասը զվիզ յրատոսիշտ զմզգյուտովիսո
: զվեզմբրգտկաչ վիթ 1920 Եղշտուու մմենդն ոմ՛՛

ՏԱՐ ՎՃՑՎՆԵ ՆԿՄԿՉՍՍՄԻ յԳԻԴԱ • ԶՑ

: վմզժոսով նմալյու
նզուտ յրակինասթ Կ յրակիթմզք իսլեթոթոփ մդ
ովլոտ մմզեմը տղ զվեզմնասդն օտենորք մդ կով
Քյ յրանկտու զումբթամսիտձ օտիկօվզտ ։ օտմտ Յզավ

Եմոյ Յովժնզք զոկովիզո յուս շոմ մգեմը մսի ։ ոտի
տես մդ ոգ ուազտամդք ։ չզվ : մզտի նսուն ալ զ —
· մդ յրաթզփթզփ մրվուշ
մզդնմադն քսզոզդու զվիզ յրազգտայ զումզ մմզմ Կ
յրաստցուի մդ «մզեմը» մրվուշ յրամզզումտազմաք
: ծյյր վերամբուն մմվլ իսզնեզմոցում
ա իսմենմը մդ յրազնենոթ տղ մմզզինեասք : յրազոց
մմզ վմզգմույտոմ դ վմզզինեասին մդ յրագումտատ մմզզ
ակերտասթ և զմզգիկմզթ օտիսա վմսուլ մրվուշ

2

։ մդ զկմոչ մրս ։ մդ յրազտա մքոյմնուն յրազումտաստ
նմտ Կ լմ ։ մզտմտես տմզ Կ զվիսոսՈ մդիզյ զոկով
ափունց մդ յրազնենոթ տսր մկ զմովյ Յսի մրվուշ
։ մմզմ զոկումմմուտց զվիզ յրախզտն զվուովյ
ազշ վզզնեզոզտոկ յրանեմբուն վրվուշ կով ։ յրազում
ուուտ վզտնուն զվուովյ տպշ (վզվլուտամ) վմսոսՈ մդիզյ
զվիզ յրատուոյտ մզմանի ։ մմզմունուն ։ զվիզ կինմատր
ուուտ «մմտպակ» օտիկիքտք կոտ վմզգումնուն ։ Նմ՛՛
։ օտզաս մերամբուն վլ իսզնեզոզտուկ նվզտ
յրազն մդ ուտան վկուլուցու լզ ոյրվուշ մմզվ : մբուզուկ
օտիկիքտք իսմումնուն ովլուն զվիզ զուստ տմզ ովենզվ զթ
։ զվիզ յրազուտ մմզգուիզմուշ վրվուշ ովոցու տոջ
։ մդ ելիմ
- զզբակիզմում զվիչ վզվլուտամ մդիզյ մրվուշ վզումզզ

1

ԵԱՎՀԱՆ ԿԶՑ ԵԱՎՇՈՏԱ ։ ՏՑ

: նոմենզվլուտամ Եղինակ մզվեկմուց
։ մդ օտիկիմփ մզվեկմ
- ուց : եղովոցուց յրայուզք մկուզտ մզր իստուզ

մզմաք քոյինդեռտամո զվեղիու նվրեակ պմա
ու ոմ—՝ ծաստ ՛տաս ՝ գ տղշ եզր զգեցամց —
• մզմաքիզ ՝ ծաստ ՛ծասղ —

• նվշպոկտամ

յալզզիզ ծաստ դ նվմնմդի մզտետմչ նվժնզք վզվմակ
տողտմ մվյամտկ կզր մրտթյանտմ վիտքմտկ տղ
զգեցամց մզկիզ նորդիր յատակսց քմոկդոչ նբոց
: զվմզցա նվժ մզտաւսմիրտպի

յատքշիսմսի ՝ նզզոչտղ տղշ զվմզ յասեւ դ զվեղիզտայ
վիուցտազ մմզմկտմու ։ տմի վտակսց հտեսցտստ վմ
մզմվրմտկ զվեղիկտչմտչ մմզկտուվիու յունզո վ ։

մզ

մտտատպտրտմչ վիտդու նմ— զմզմզմտտ վրետմտտեն
զտկտվետմտենտ ոզեցամց նվիզմկու նվրովկ ։

ԱԿՍԵՋՈԱ ՀԳԾՆՎՍԺՓ ։ 98



։ (նվմնտնզն ՝ նվզտեմց) նսկամկ ՝ եվրոմչ ։ 8
ըգունեւ զվկտտունց ՝ նսէնովն նվեւ ՝ հւսեվկ ։ 2
մզունի ՝ մրտթյանտմ վտակտ բարետմզամու ՝ տորոմկ ։ 1
այսպահ ։ մրտթյանտմ վտակտ բարետմզամու ՝ տորոմկ ։ 1
ԱՌԵՄՑՈՒՅ


։ «Նվիչումչ զմիշալվշամսի» զգ յասդոխու զվմ
ազդելիքումչ զմրսնունու վմկմզմ մզր մաի ՝ զէ մունկ
։ նվկտնզն կրակ
։ վիսլիշսմսի նզզօմե զտետնսմտկ մմզչթ տոջ
։ նզբվն վտուսպտփ զտասպիզստոյ զվրող ։ վ
։ նզկումկ նզոկո դ մնմսկտու
ակտշ վլոզն նզնեւս զմվնտնզն միսլվշամսի մզկիզ
։ մտյան ալզբետց զմվնտնզն մզկիտետք
վմզաւսփրտփ մտղու մզբ գլում ժգմզբ-ւսկմզթ
։ մմիտնզն քտինտսսյ վր տար վտակ
նզտակու իսումզկ վլզուսուղու պիսլվշամսի մզկիզ
։ վտմոց
նզիտումտուտու տուկսց վր նվմզզմվտկտու մզբմտկ



Ամբողջ ջոկատն անզուսպ հեղեղի նման վազ տվեց
Եր անվեհեր հրամանատարի հետևից:
Սպիտակները լավ ջարդ կերան և հետ շղթավեցին:

ԲԱԹՅՐԱՆ

1. Առաջապահ— առջեկ, սկզբից զնայող:
 2. Խունապ— չփոթություն, խառնակություն:
 3. Անվեհեր— անվախ:
 4. Անգուսպ— չպապող, ուժդին:
 5. Մարտ— կոիկ:
-



37. ԲՈՒԳՅՈՒՆՆԻՆ ՅԵՎ ՍՊԻՏԱԿՆԵՐԸ

Այնպես պատահեց, վոր հետախուզության ժամանակ Բուգյուննին մի դյուզ մտնելիս՝ դեմ առ զեմ Հանդիպեց սպիտակներին: Խուսափել անհնար եք,

սպիտակները կկրտկեյին հետեից՝ կսպանեյին: Բուգյուննին մտածեց... «Կորած ենք, յեթե հնարագետ չինենք»— ու նայեց իր հետ ծուղակն ընկած ընկերոջ դեմքին:

Սպիտակները կարծեցին, թե իրենցից են, միայն անձանոթ: Ապա մի քիչ շփոթվեցին: Բուգյուննու ձին նման եր կարմիր բանտկայինների ձիերին. պոչը խուզած եր:

— Ես ի՞նչ ե, ձիդ նման ե Բուգյուննու դինվորների ձիերին:

— Այո,— ընդհատեց Բուգյուննին,— սա յես խլել եմ կարմիրներից:

Սպիտակները հավատացին, առանց մտածելու, վոր հետները խոսում ե հենց ինքը՝ Բուգյուննին:

— Դե, ներս յեկեք՝ ընթրենք,— հրավիրեցին նըրանց:

Բուգյուննին ընկերոջ հետ ներս մտավ: Ընթրիքի ժամանակ սպիտակները գովում եյին իրենց դլուխը:

— Բուգյուննուն ճանաչում ենք. ձին ել և ծանոթ: Վոր հանդիպենք՝ վողջ-վողջ կրոնենք:

— Յես ել եմ ճանաչում,— ասաց Բուգյուննին:— Մի անգամ ուզում եյին գերի վերցնել, բայց ձեռքիցս շուտ դուրս պրծավ:

Քիչ հետո Բուգյուննին և ընկերը բակ գուրս յեկան: Վոչ վոք չկար: Նրանք թռան ձիերին ու անհետացան:

Այս հանդիպումը զուր չանցավ. նա վերցրեց մի վաշտ ու հարձակվեց այն գյուղի վրա, վորտեղ քիչ առաջ ընթրում եր սպիտակների հետ:

Սպիտակները գիմագրեցին, բայց զուր: Բուգյուննին բոլորին գերի վերցրեց:



38. ԶԱՊԱՅԵՎ.

Մեկ անդամ Զապայեվը մարդատար ավտոմոբիլով գնաց Հետախուզության:

Շուտով նա մոտեցավ մի դյուդի: Հայլանական և, կոր այդտեղ մերոնք կլինեն, մտածեց նա և կարդադրեց շոփերին ավտոյով մտնել դյուդը:

Հանկարծ փողոց թափվեցին սպիտակները: Ճանաչելով Զապայեվին՝ նրանք հարձակվեցին ավտոմոբիլի վրա:

— Զե՞ս ազատի! մեր ճեռքից — գոռում եյին սպիտակները:

— Ավտոն վարել չըջանաձեւ, — կարդադրեց Զապայեվը շոփերին և սպիտակներին դիմավորեց գնդացրային կրակով:

Շոփերն ավտոն պտտում եր դյուդի չուրջը, իսկ Զապայեվը կապած գնդացրին, գնդակներով հնձում եր սպիտակների շարքերը:

Սպիտակները խուճապի մատնվելով նահանջեցին:

39. ՀՈԿՏԵՄԲԵՐ

Այսոր նորից ենք տոնում
Քո մեծ տոնը, Հոկտեմբեր.
Դու ավել ես բոլորին
Երջանիկ կյանք, լավ որեր:

Մեր յերկիրը լայնարձակ
Ծաղկափթիթ մի պարտեզ,
Աւր պայծառ ե կյանքը նոր
Վառ արեվի լույսի պես:

Քեզ ծնել են ու սնել
Լենին պապին թանգագին
Յեվ հարազատ Ստալինը—
Առաջնորդը մեր անդին:

Այսոր, գվարժ քո տոնին,
Առած կարմիր դրոշներ,
Մենք դոչում ենք միաձայն՝
Կեցցե՛ կարմիր Հոկտեմբեր:



40. Ընկեր ՈՐՁՈՆԻԿԻՉԵՆ ՅԵՎ ՄԱՆՈՒԿԻՆԵՐԻ

«Սամատոչկա» դործարանի պիոներները 1934 թվի ամառը հանգստանում եյին ծովափի լազերներից մեկում : Լազերից մի քանի կիլոմետր հեռու, սահատորիայում հանգստանում եր ընկեր Մերգո Որջոնիկիձեն :

Պիոներները վորոշեցին պատղամավորներ ուղարկել ընկեր Որջոնիկիձեյի մոտ խնդրելու, վոր նաներկալինի լազերի փակման հանդեսին :

Պիոներները իրենց հետ ընկեր Որջոնիկիձեյին նըլվերներ տարան — ծաղիկներ և մետաքսյա փողկապ պիոներական նշանով :

Պիոներները հանդիպեցին ընկեր Որջոնիկիձեյին խճուղու վրա, ավտոմօրիլում : Որջոնիկիձեն տեսնելով նրանց նշան արեց շոֆերին, վոր մեքենան կանգնեցնի : Մեքենան կանգնեց, և ընկեր Որջոնիկիձեն սպասում եր, թե ի՞նչ պետք է ասեն պիոներները : Բայց բոլորն ուրախությունից չդիտեյին՝ ինչից սկսել :

Ընկեր Որջոնիկիձեն զգալով այդ, ասաց,

— Համարձակ, համարձակ, տղաներ, ի՞նչ եքամաչում, — և ապա զուրս զալով ավտոյից՝ մեկմեկ դրկեց պիոներներին և սկսեց ուրախ զրուցել նրանց հետ : Պիոներները սիրտ առան և իրարից առաջ ընկնելով՝ հանձնեցին նվերները : Ամեն մեկն ուղում եր մի խոսք ասել ընկեր Որջոնիկիձեյին : Վերջում արդեն պատգամավորներից մեկը հայտնեց .

— Ընկեր Որջոնիկիձե, շատ ենք խնդրում լազերի փակման հանդեսին մեզ մոտ գալ :

— Խոսք չեմ կարող տալ, բայց ամեն կերպ կաշխատեմ, — պատասխանեց ընկեր Որջոնիկիձեն :

Լազերի փակման որը մի նախակ կանգնեց նավահանգստում : Նավակում հինգ հատ մեծ արկղ կար, իսկ արկղների մեջ խմորեղեն և այլ նվերներ : Այս բույրն ուղարկել եր ընկեր Որջոնիկիձեն :

Ընկեր Որջոնիկիձեն նամակով ներողություն եր խնդրել, վոր զբաղված լինելու պատճառով չի կարող ներկա գտնվել հանդեսին :

41. Ընկեր ԿԻՐՈՎԼ ՄԵԶ ՄՈՏ

Յերբ յես փոքրիկ եյի, մանկապարտեզ եյի համախում : Մի անգամ մեր գաստիարակչութին ասաց .

— Հենց հիմա մեզ մոտ կդա ընկեր Կիրովը :

Յերեկոյան ժամը վեցին մանկապարտեզի զանգը տվին : Մենք յերկու կողմից շարվեցինք դուան մոտ, վերցրինք դրոշակներ և չունչներու պահած սպասում եյինք :

Դուռը բացվեց և ներս մտավ ընկեր Կիրովը : Նա կանաչ գլխարկ եր զրել, թեթև վերարկու և յերկարավիզ զեղին կոչիլներ եր հազել : Նա շատ ուրախ եր Մենք ծափ տվինք, վերցրինք դրոշակները և սկսեցինք «ինտերնացիոնալ» յերգել : Ընկեր Կիրովն ել մեզ հետ յերգում եր :

Սկսեցինք քայլել : Ընկեր Կիրովն առաջնայում եր,



թե ինչպես ենք քայլում, ապա կանգնեց առաջին շարաքում և սկսեց մեղ հետ քայլել։ Քայլելուց հետո դնացինք սեղանատուն։ Ընկեր Կիրովն ել յեկալ։ Մենք պտտվում եյինք նրա շուրջը։

Ահա մենք մտանք սեղանատուն, իսկ ընկեր Կիրովը նստելու տեղ չունի, մեր աթոռակի վրա չի կարող նստել։ Այն ժամանակ մենք ընկեր Կիրովի համար յերեք մեծ աթոռ բերինք։ Նա մեկի վրա նստեց, մյուսներն ել մոտեցրեց իրեն և նրանց վրա նստեցրեց ամենափոքր յերեխաներին։

Սերգեյ Միրոնովիչը մեղ հետ կարկանդակ եր ու տում և հեքիաթներ պատմում։ Յերկու հեքիաթ՝ յես մինչև այժմ ել հիշում եմ. մեկը նապաստակի մասին եր, զորի ականջներն ու պոչը կտրված եյին, իսկ եր, զորի ականջներն ու պոչը կտրված եյին, վորը փեթակ-յերկրորդը՝ ծուռվոտանի արջի մասին, վորը փեթակ-ներից մեղը եր գողանում։

Հետո խաղացինք «Սահմանապահներ» պիեսը։ Ընկեր Կիրովը գլխավոր սահմանապահն եր, իսկ մենք՝ նրա ոգնականները։ Ընկեր Կիրովը յերկար ժամանակ նրա մեղ հետ, իսկ հետո սկսեց հրաժեշտ տալ և

Հերթով բոլորին բռնեց և բարձրացրեց։ Ինձ ել բարձրացրեց, կամացուկ ցած դրեց և ձեռքս սեղմեց։ Մենք դրոշակներ վերցրինք և ընկեր Կիրովի հետ փողոց դուրս յեկանք։ Նա ավառմոբիլ նստեց, ձեռքը թափահարեց ու դնաց։

42. ԾԱՂԻԿՆԵՐԻ

— Ո՞ւր գնացին ծաղիկները։
— Սո՞ւս, քնած են հողի տակ,
Տաք ծածկված վողջ ձմեռը
Զյուն ծածկոցով սպիտակ։


Կդա դարնան արեն ել յետ
Իր շողերով կենդանի,
Զմռան սաստիկ ցրտերի հետ
Զյուն-ծածկոցը կտանի։

Յել՛ք, կասի, ի՞մ մանուկնե՛ր.
Յեվ հենց նրանք իմանան,
Դուրս կհանեն գլխիկները,
Աչիկները կբանան։

43. ԶՄՌԱՆ ԳԱԼԻ

Զմռան գալն ամենից շուտ իմանում են թոշունները։ Աշունը գալուն պես, նրանց մեծ մասը խումբ-խումբ չփում ե զեալի տաք յերկրներ։ Կան թոշուններ ել, վոր չեն չփում. նրանք ձմեռը մնում են մեզ մոտ։

Աշնան վերջը նրանց գետուքներն ավելի յեն շատանում ու յերկարում։



Աշնան վերջը ծառերի տերևները թափվում են ։
Նրանք մերկանում են ու կասես պատրաստվում են
քնի, մինչև վոր գարնան արևը նորից նրանց զարթեց-
նի: Կեղեց վերաբերի նման պինդ փոթաթված և ծա-
ռին և չի թողնում, վոր ծառը մըսի ձմռան ցրտերից ։

Աշնանը վայրենի կենդանիների մորթիները ծածկ-
վում են խիտ ու յերկար մազերով:

Նրանք իրենց համար շինում են տաք վորջերէ
Վորջերում մեծ քանակությամբ ձմռան պաշար են հա-
վաքում. որինակ՝ սկյուռը հավաքում ե ընկույզ, կա-
ղին, սունկ և զկեռ: Նա ամբողջ ձմեռը նստած իր տաք
վորջում՝ ուրախ-ուրախ կրծում ե պաշարը և սպասում
գարնան գալուն: Բայց բոլոր վայրենի կենդանիները
ձմռան պաշար չեն հավաքում: Կան գաղաններ, ինչպես
աղվեսը, գայլը, վորոնք ամբողջ ձմեռը սոված փո-
րով դես ու դեն են թափառում մի բան ճանկելու, մի
բան ուտելու, վոր սովից չմեռնեն:

ԱՌԱԾ — Զմեռվա վարդը կրակն ե:



44. ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆՔ

Թոփ-վոփ
Մի ճպուռ
Վողջ ամառը
Շուռ ու մոռ,
Յերդեց, ճոռաց.

Ճուճոաց:
 Մին ել, ըհը—
 Զմեռը
 Փռեց իրա
 Թռերը,
 Բացեց գործը
 Սպիտակ,
 Դաշտերն առավ
 Զյունի տակ:
 Անցան պայծառ
 Որերը.
 Ել կո՞րն ասեմ,
 Ել կո՞րը,
 Յերբ ամեն մի
 Թփի տակ
 Թե՛ սեղան կար,
 Թե՛ ոթյակ:
 Յեկան որեր
 Ցրտաշունչ,
 Ճպուռն ընկավ
 Լուռ ու մունջ.
 Քաղցած փորին
 Ել ի՞նչ յերդ—
 Ցուրտը տարավ
 Վոտ ու ձեռք:
 Զը՞նդը-զը՞նդը
 Դողալով,
 Ծա՞նը-ծա՞նը
 Սողալով,
 Նա մըյունին
 Ասում եր.
 — Գլխիդ մատաղ,
 Սանամեր,
 Մի ճար արա


Շունչ առնեմ,
 Ցրտից, սովից
 Զմեռնեմ.
 Կերակրի,
 Տաքացուր,
 Մինչև գարուն
 Ապրեցուր:
 — Ի՞նչ խաբար ե,
 Սանիկս,
 Զարմանում եմ,
 Զանիկս,
 Զաշխատեցի՞ր
 Ամառը,
 Ասա՛, ի՞նչ եր
 Պատճառը:
 — Եղպես բանի,
 Սանամեր,
 Ել ժամանակ
 Ո՞վ ուներ.
 Են խոտերում
 Բուրավետ
 Ցերգում եյինք
 Մերոնց հետ...
 — Ուրեմն դո՞ւ...
 — Այո՛, յես
 Վողջ ամառը
 Դեն ու դես,
 Ցերգում եյի
 Մշտապես:
 — Ցերգո՞ւմ եյիր...
 Շա՛տ բարի:
 Այժմ ել բռնի
 Վերվերի,
 Քամին ծափ տա
 Դու պարի:

Զորս սայլուրդ եյինք, վարձով ապրանք եյինք
տարել քաղաք, այնտեղից վերադառնում եյինք: Հուն-
վար ամիսն եր: Անտառումն եյինք, մթնեց. պետք ե
չիշերեյինք: Գրիգոր քեռին, վոր ամենից մեծն եր և
մեր գլխավորը, մի հարմար բացատ ընտրեց:

Շատ ժամանակ եր անցել թե քիչ, չգիտեմ, ունկ
եւ Մելքոն ապերը դռասց.

— Վեր կացեք, մ'յ տնաքանդանը, գայլերւ
կան, ի՞նչ պիտի անենք:
Հեռվից լավում եր գայլերի վոռոցը. մեկը վոր
սկսում եր, մյուսները շարունակում եյին. նրանց աչ-
քերը մթնում պսպղին եյին տալիս: Յեզները թողիլ
եյին իրենց խոտը և մեջքներն իրար արած, գլուխնե-
րը կախած, անհանդիստ աչքերով դիտում եյին շուր-
ջը և փնչացնում:

— Կըսկը, կըսակը մեծացրեք, թեժացրեք, — այս
տվից Գըհգոր քեռին արթնանալով։ Նա խկույն հաս-
կացավ, թե ինչ և կատարվում է։



Յերկու կրակի վրա ել փայտ լցըինք. կայծերը
յերկինք բարձրացան: Գայլերը մոտեցել, շրջապատել
Ելին մեզ. կրակի բոցով չատ լավ տեսնում ելինք նը-
րանց բաց բերանները և փայլուն աչքերը. սարսափով
լուսմ ելինք և նրանց ատամների չխկչխկոցը:

— վա՛, Գրիգոր ջան, կորած ենք, բօնչ պիտի ա-
նենք, — ասում եր վախկոտ Մելքոն ապերը:

— Մի վախենաք, վոչինչ չի լինի, — մոի հոտ են
առել, անիրավներ... այ, մի հրացան լիներ հա՞...
ասում եր քեռին հանդիսառ ու վստահ:

Թե ինչքան ժամանակ տեսց ես սարսափը, չեմ
կարող ասել... գայլերի ողակը հետզհետե նեղանում
եր... ու այնքան ել շատ ելին... յես յերեսուն ա-
սեմ, դուք քառասուն իմացեք:

Յերբ գայլերն այնքան մոտեցել եյին, վոր կարե-

Մե յեր փայտը շպրտելով հասցնել նրանց, քեռին հրամայեց, վոր վառվող ածխակոթերը շպրտենք դայլերի վրա:

«Դե շուտ» վոր ասեց, բոլորս ել վառվող փայտերը շպրտեցինք գայլերի վրա: Նրանց մեջ իսկույն ՚իրարանցում ընկալ ու հետ-հետ գնացին: Այդ միջոցին քեռին վերցրեց մի ահագին ածխակոթ և ուղղակի հարձակվեց ամենամոռ գայլի վրա: Սա սոսկալի վոռնոցով սկսեց փախչել, մյուսները հետեւեցին նրան:

Հինգ րոպեյից հետո դայլերի վոռնոցը շատ հեռավից եր գալիս:

— Ել չեն դա, անհանդիստ մի լինեք, — ասաց քեռին, — տեսե՞ք՝ յեզներն ինչպես ուղղվեցին, հանդըստացան ու սկսեցին խոտ ուտել...

Իսկապես սպասեցինք տասը-տասնհինգ րոպե, և գայլերը չվերադան:

— Շատ ուրիշն ես, Հա՛, Գրիգոր, — ասաց Մելքոն ապերն ուրախ ժպիտով:

Իսկ Գրիգոր քեռին փաթաթվել եր իր յափնջու մեջ և արդեն քնել եր:

46. ՊԱՌԱՎԻ ՀՈՐԹԸ

Զյուն եր դալիս փաթիլ-փաթիլ,
Հետն ել անձրև կաթիլ-կաթիլ.
Այդ միջոցին մի պառավ կին
Հորթն եր փնտրում դաշտի միջին:

Կովը յեկալ տավարիցը,
Կուրծ ու ծծեր կաթով լիքը
«Հորթուկս ո՞ւր ե», նա բառաչեց,
Խեղճ պառավին լացացրեց:



Ղազարոս Աղայան

(մանկական գրող)

Մինչդեռ այսպես պառավ ու կով
Վողբում եյին լաց ու կոծով,
Հանկարծ լավեց մի բարակ ձայն,
Կովն իմացավ, վոր հորթն ե այն:

Կովը վագեց բառաչելով,
Պառավն յետքից տընքտընքալով,
Կորած հորթը մորը դտավ,
Լիք ծծերը բերանն առավ:

Ծծեց բոլոր կաթն ու տկանց,
Տանտիկնոջը բան չթողեց.
Բայց պառավը այս անդամին
Սիրով ներեց չար հորթուկին:

Ապրում եյին մի բակում կատուն ու աքլորը, չունն ու այծը: Յերեկոները մեկ-մեկ նրանք հավաք-վում եյին ու զրույց անում իրենց գործերի մասին: Մի բանում միայն նրանք չեյին համաձայնում—ի՞նչն ե աշխարհիս յերեսին ամենից լավը:

— Կաթից լավ բա՛ն,— ասում եր մլավան կատուն:— Մուկն ել լավ ե, բայց բռնելը մի քիչ դիմացավանք ե:

— Եհ, դու ել բան ասացիր. կաթն ի՞նչ ե Պոր. ա՛յ, ուրիշ բան ե կորեկը կամ գարին,— վիճում եր փիսոյի հետ աքլորը:

— Դատարկ բաներ եք ասում, յեղբայրնե՛ր,— ընդհատում եր նրանց Բողարը.— վոսկո՛ր, այ ինչ եմ ասել, վոսկորին վոչինչ չի հասնիլ: Վոսկորի համը յես լավ գիտեմ. գուք ինձ հավատացեք...

Սյծը լսում եր, լսում ու միրուքը տմբտմբացնելով խոսում.

— Դուք վոչ մեկդ ձեր բերանի համը չգիտեք: Փափուկ ու թարմ խոտը վոչնչի հետ չեմ փոխիլ, մանավանդ յեթե բուրավետ ե:

Վիճում են ու վիճում. իսկ թէ ինչն ե ամենից լավը, դեռ ևս չեն վորոշել:

—

48. ՍԱՀՆԱԿԻ

Բլրակի լանջին ձյունը սառել եր, պսպղում, պեծպեծին եր տալիս:

— Տղե՛ք, դնանք սահելու, — ասաց Գեորգն իր ընկերներին:

— Գնանք, դնանք, — ասացին մյուսները և սահնակներն սուած՝ գնացին:



Վահանն ու Սինոն ել դնացին, թեև սահնակ չունեյին:

Որը պարզ եր ու ցուրտ: Արեգակը բոլորովին չեր տաքացնում յերեխաների սառած ձեռքերը: Նրանք կատակներ եյին անում, վազվզում, վոր չմրսեն:

Կարգով կանգնում եյին բլրակի դլխին: Սահնակներին նստած՝ սահնակներն իրար հետեւից բաց եյին թողնում, սահելով իջնում եյին մինչեւ ստորոտը և նորից բարձրանում:

Սահնակ չունեցողները ծաղրում կամ քաջալերում եյին սահողներին:

— Սինո՛, Վահա՛ն, յես հոգնեցի, յեկեք դո՛ք սահեցեք, — ասաց Կոստին:

— Առաջ դո՛ւ սահի, Սինո՛:

— Զե, դո՛ւ սահի, Վահա՛ն:

Վերջապես Սինոն սկսեց սահել:

Յերբ յերկրորդ անգամ սկսեց սահել, հենց սկըզ-

թից սահնակը պտտվեց և արադ թափով իջանլ։ Սինոն
ճշում եր, ոգնության եր կանչում։ Ի՞նչ անելին. յե-
թե մոտենային, պիտի ընկնելին։ Բոլորն ել կողքից
վազում, վա՛յ, վա՛յ, եյին կանչում։

— Վա՛յ, Սինո ջան,— լաց եր լինում վահանը և
մոտից վազում։

Սահնակը տատանվում եր, ոլետք և շուռ գար և
խեղձ Սինոյին տակովն աներ ու ձորը գցեր։ Մեկ ել են
տեսան, վոր վահանն ամբողջ մարմնով մեկնից ճա-
նապարհի վրա, սահնակի առջելը։

Բոլորը զարմացած ճիչ արձակեցին։ Սահնակը
դեմ առավ վահանին ու կանդ առավ։ Յերբ ընկերնե-
րը բարձրացրին վահանին, նրա դեմքն ամբողջովին
արյունոտված եր։

Սինոն փրկված եր։ Ցնծությունն ընդհանուր եր։
Բոլորը հավաքվել եյին վահանի շուրջը և աշխատում
եյին ճյունով կտրել նրա քթի արյունը։
ԲԱՌԱՐԱՆ

1. Ստորոտ— բլի (սարի) ներքեկ մասը;
2. Քաջակերել— սիրտ տալ, խրախուսել;
3. Տատանվել— որորվել։

49. ԱՆՏԱՌԻ ԳԻՐՔԻ

Քեռի Սիմոնը պահակ եր անտառում։ Մեկ անգամ
Գրիշան խնդրեց, վոր քեռին իրեն ել անտառ տանի։
Ահա գնում են նրանք ճյունածածկ ճանապարհով։
Քեռին շուրջն ե նայում ու ասում։

— Ա՛յ թե ինչքան նապաստակ կեր են ճարում ես
Հանդերում։

Գրիշան նայում է շուրջը— նապաստակ չի յերե-
ղում։

— Ինչի՞ց իմացար, այ քեռի, — հարցնում ե նը-
րան։

— Հետքերից, չե՞ս տեսնում հետքերը ճյունի
վրա։

Մանում են անտառ. հասան պահակատուն։ Բո-
ղարը վազում է տնակի շուրջը, հոտոտում է ճյունը,
կլանչում աղիողորմ ձայնով։

Քեռին դիմում է շանը.

— Հը՛, Բողարիկ, առանց մեղ հյուրեր են յեկել
այստեղ, չե՞—անպիտան գայլերը…

— Այ քեզ զարմանալի բան, — հարցնում է Գրի-
շան։ — ախր վո՞րտեղից իմացար։

— Աչքերդ լավ բաց արա, Գրիշիկ. մի նայի՞ր։
Թարմ ճյունի վրա գայլի թաթերի հետքեր են յերե-
ղում։ Հենց վոտքը գնում է ճյունի վրա—տեղը յերե-
ղում է. կարծես տրվում են հետքերը։ Սա—անտառի
գիրքն ե։ Այ, տե՛ս, կարծես շան հետքեր են, բայց
ավելի խոշոր. ուրեմն գայլ է անցել։ Իսկ այստեղ ո-
ղականման հետքեր են, նապաստակն է վաղ տվել։
Այս մյուսը—խաչածե նշանները— աղուակի հետքեր
են։

— Այ թե ի՞նչ— զարմացավ Գրիշան։ — բայց ին-
չիդ են պետք, քեռի, եղ նշանները։


— Ի՞նչպես թե։ Հետքերը վոր ճանաչես, կարող
ես գայլից ու զարմանից խուսափել։ Իսկ յեթե վոր-
ուրդ ես կամ զենքեր կա մոտդ, կարող ես հետապն-
դել։ Ասենք թե արջի հետքեր ես տեսնում. զնա՛ հետ-
քերով— և կհանդիպես նրան։

Ով վոր անտառի գիրքը կարող է կարդալ, նա չե-
զախենում անտառ գնալուց։ Զե՞ վոր ամեն ինչ պարզ
գրված է այդ գրքում— նայիր ու կարդա՛։

ԲԱՌԱՐԱՆ

1. Աղիողորմ— ցալալի, աղերսող։

2. Հետապնդել— հետեւել, յետեից զնալ։



50. ԲՈՒԾԸ

1

Շատ ե պատահում, վոր հրդեհ ընկած տանը յերեխաներ են մնում: Նրանց աղատել հնարավոր չի լինում, վորովհետև նրանք վախից թագնվում են ու լուսմ, ծուխն ել չի թողնում, վոր յերեան: Յերեխաներին աղատելու համար սովորեցրած չներ կան:

Այս չներին պահում են հրշեջները, և յերբ մի տուն հրդեհ ե ընկնում, նրանք այդ չներին ուղարկում են՝ մանուկներին աղատելու:

Այդպիսի մի շուն կար, վորը տասներկու յերեխայեր աղատել: Այդ շան անունը Բոր եր:

2

Մի անդամ մի տուն եր վառվում: Յերբ հրդեհաշեջներն յեկան, մի կին վազեց նրանց մոտ և լաց լինելով ասաց, վոր իր յերկու տարեկան աղջիկը մնացել ե տանը: Հրդեհաշեջները ներս ուղարկեցին Բորին:

Բորը վազեց ու չքացավ բոցի մեջ: Հինգ բոպեյից հետո նա, ատամներով աղջկա շապիկից բռնած, դուրս թռավ տանից: Մայրը գրկեց աղջկանը և ուրախությունից լաց յեղավ: Աղջիկը կենդանի յեր: Հրդեհաշեջները փաղաքում եյին շանը և նայում, վոր տեսնեն՝ հո չի՞ վնասվել:

Բայց Բորն ուղում եր նորից ներս վազել: Հրդեհաշեջները կարծում եյին, թե ներսն ելի մեկը կա և բաց թողին շանը: Բորը ներս վազեց և շուտով դուրս յեկավ մի ինչ-վոր բան ատամներով բռնած: Յերբ մարդիկ մոտ վազեցին ու տեսան, թե ինչ ե բերել նա, ծիծաղից թուլացան:

Շան բերանին մի մեծ տիկնիկ եր:

51. ԶՄԵՌ

Ծառը մերկացավ,

Զրկվեց տերեից.

Զյունի փաթիլներ
իշան ամպերից:

Զյուն ու ցուրտ յեկավ

Առու, գետ լոեց.

Իր սպիտակ գորգը

Զմեռը փռեց:

Զյունը ծնկահար

Նատեց մեծ ճամփին.

Սպիտակ Հյուսերը

Կիտեց գետափին:

Ծառեր ու թփեր

Զմեռն արծաթեց,

Սար ու ձոր ընկավ,

Կալեց ու կապեց:

Մի անդամ յերկու աղվես ընկերացան:
 Մի որ աղվեսներից մեկն ասաց մյուսին.
 — Յեղբայր, դու քանի՞ հնար դիտես:
 Ընկերը պատասխանեց.
 — Յես դիտեմ քառասունը. իսկ դու քանի՞սը դիտես:
 — Յես ել յերկուսը դիտեմ:
 Այդ ժամանակ քառասուն հնար իմացողն ասաց.
 — Վոր այդպես ե, դու ինձ ընկեր չես կարող մենել:
 — Ինչո՞ւ չեմ կարող, — զարմացած հարցրեց առաջին աղվեսը:
 Յերկրորդ աղվեսը պատասխանեց.
 — Շատ պարզ ե, դու միայն յերկու հնար դիտես,
 իսկ յես՝ քառասունը:

Այդ որվանից աղվեսներն իրարից բաժանվեցին. բայց յեկավ մի որ, վոր աղվեսները նորից իրար հանդիպեցին: Այս անդամ քառասուն հնարի տեր աղվեսը գտնվում եր թակարդում:
 Յերկու հնարի տեր աղվեսը նկատելով նրան՝ ասաց.
 — Յեղբայր, այս ի՞նչ եմ տեսնում, եղ ի՞նչ որն ես ընկել:
 Այդ ժամանակ աղվեսը թակարդից պատասխանեց.
 — Ել ի՞նչ հարցնելու ժամանակ ես դտել. կորած եմ, հնար ունես, տես:
 Առաջին աղվեսը մի քիչ մտածելուց հետո ասաց.
 — Յեղբայր, մի՛ մտածիր, հնարը դտա.—
 Արի մենք ստակած ձևանանք, դու այդտեղ քո թա-

կարդի մեջ փովիր, իսկ յես ել քեզահից մի քիչ հեռու։ Յես գիտեմ, քիչ հետո վորորդը պիտի գտ և քեզ թակարդից հանի. հետո նա պիտի հետ դառնա այն ժամապարհով, վորի վրա յես եմ լինելու պառկած։ Ճանապարհով, վորի վրա յես եմ լինելու պառկած։ Հենց վոր ինձ տեսնի, շատ կուրախանա, քեզ կղնի ցած և կվազի գեղի ինձ, վոր վերցնի։ Այն ժամանակ ցու քո տեղից կփախչես, յես ել իմ տեղից և այսպիսով կազմակենք վորորդի ձեռքից։
 — Կեցցես, — ասաց քառասուն հնար իմացողը, — այդպես ել կանենք։ Յերանի՝ յես ել քեզ նման յերանի լավ հնար իմանայի, քան թե այսպիսի քառասունը, վորոնք ինձ այս որին հասցըին։

53. ՀԱՅՅՈՒՐ ՔԱՍՆԱԼԵՑ ԲՈՒԼԿԻ (Դուրովի գազանանցում)

1

Բերին շատ եր սիրում, յերբ իրեն սպասարկող նիկոլայը բերիի մարմինը չփում եր վաղելինով։ Վաղելինը բերիի մարմինը պահպանում եր ցրտահար լինելուց։

Պատահում եր, վոր չփման ժամանակ բերին չառություններ եր անում, կամ գլուխն եր շաբժում, կամ ինձիթով հրում եր շուրջը գտնված իրերը — ակամ ինձիթով հրում եր շաբժում կամ ինքն ել եր հասկանում, թոռներ, դույլեր և կարծես ինքն ել եր հասկանում, վոր շաբժություն և անում։


Բերին չառություն եր անում նաև լողանալու ժամանակ, իսկ լողանալ նա շատ եր սիրում։

Ղրիմում հանդստացողները ժամերով նայում եյին՝ ինչպես բերին ծովում լողանում եր. լարախազացինը ման նա գլուխկոնծի յեր տալիս ալիքների մեջ։ Բերին ման նա գլուխկոնծի յեր տալիս ալիքների մեջ։ Բերին ծովի հատակից կնծիթով ավաղ եր հանում, ծեփում

թլուխը և ուսերը, կամ կնճիթով հարվածում ալիքներին: Մի լավ խաղալուց հետո՝ նա դանդաղ սուզվում եր ջրի տակը, գուրսը թողնելով միայն իր կարճլիկ պոչը: Ամբոխը հռհում եր:

Բերին շատ եր սիրում մարդկանցից բան խնդրել. յես նրան շատ լավ եյի կերակրում, բայց նա ելի սիրում եր հասարակությունից նվերներ հավաքել: Մարդիկ նրան սիրում եյին և առատ հյուրասիրում: Մանավանդ յերեխաները— նրանք անընդհատ բերիի ձկուն կնճիթի մեջ եյին գնում դանազան քաղցրեղեններ:

Մեկ ել տեսար՝ բերին դուրս յեկավ հրապարակ,



ոկսեց զլուխ տալ. չորս կողմից նրան քաղցրեղեն են նետում: Իսկ մուրացիկ բերին գլուխ և տալիս և կլանում շաքարեղենը, ընկույզը և բուլկիները:

Մեկ անգամ յես վորոշեցի հաշվել՝ քանի բուլկի յեն նվիրել բերին: Պարզվեց, վոր մի իրիկուն հյու-

րասեր հանդիսատեսները հարյուր քսանվեց մեծ, ըստ պիտակ բուլկի յեն տվել բերիին և այդ բուլուրը նա կերել եր:

2

Մի անգամ կայարանում բերիին շրջապատել եյին մթերավաճառ կանայք: Բերին նկատեց մի զամբյուղ լիքը կաղամբով, զետնախնձորով ու գաղարով: Զամբյուղը պատկանում եր տասնմեկ տարեկան մի աղջկա, վորն ամեն ինչ մոռացած՝ դիտում եր անծանօթ հսկա կենդանուն:

Առանց յերկար ու բարակ մտածելու՝ բերին յերկարացրեց կնճիթը և ամբողջ զամբյուղը—կաղամբի, զետնախնձորի ու գաղարի հետ միասին— տարած բերանը:

Աղջիկը զարմանքից սառեց:

Նա լուռ հետևում եր, թե ինչպնդ այս հսկա կենդանին կուլ ե տալիս իր զամբյուղը:

Բերին հաճույքով կերավ և ըստ սովորության ըսկեց գլուխ տալ: Աղջիկն իրեն կորցրեց, աչքերը թարթեց և նույնպես սկսեց գլուխ տալ: Ամբոխը հռհուց:

Ճիշտն ասած՝ նույնիսկ կրկեսում բերին այսպիսի համար չեր ունեցել: Ծիծաղն սթափեցրեց աղջող համար չեր ունեցել: Եթե զամբյուղի և թե՛ բանջարեղենի արվարել թե՛ զամբյուղի և թե՛ բանջարեղենի արժեքը:

3

Յերբեմն բերին մանր գողություն ել եր անում: Նա խտրություն չեր զնում— վերցնում եր՝ ինչ պատահում եր:

Նկատում եր իրեն սպասարկողի բաճկոնը, բերին թլում եր այդ և զրպաններով միասին, վորտեղ դանը-


Վում եր ծխախոտը, քսանը, գրչահատը և նույնիսկ
անցագիրը, — այս բոլորը կուլ եր տալիս:

Դերասանական սենյակների կողքով անցնելիս, նա
հարմար առիթը չեր կորցնում ու թոցնում եր նրանց
պարիկները, դրիմի ներկերն ու զգեստները. այս բոլո-
րը նա պահում եր միկնույն տեղում — բերանում:

Մեկ անգամ նա փորձեց կուլ տալ նույնիսկ վառ-
վող նամթի լամպը:

ԲԱՌԱՐԱՆ

1. Հանդիսաւես — դիտող (ներկայացում, հանդես):
2. Պարիկ — կեղծ ծամեր:
3. Գրիմ — դերասանի դեմքին գույն տվող ներկեր (թառը-
նում):
4. Մքերավաճառ — ուտելեղեն վաճառող:



54. ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Դամանակով կատուն ճոն եր,
Շունն ել գլխին գդակ չուներ,
Միայն, գիտեմ վոչ վորդիանց վորով


Շանկել եր մի գառան մորթին
Յեկավ մի որ, ձմեռնամտին,
Կատվի կուշտը տարավ մորթին:

— Բարի աջողում, ուստա փիսո,
Գլուխս մրսեց, ի սեր աստծո,
Առ ես մորթին ու ինձ համար
Մի գդակ կարի գլխիս համար:
Վարձիդ համար միամիտ մնա,
Համա, համա շատ չուշանա:

— Աչքիս վրա, քեռի Քուչի,
Մի գդակ ե, հո մի քուրք չի.
Քու թանկագին խաթեր համար
Ուրբաթ որը համեցեք տարի:
Փողի մասին ավելորդ ե,
Մեր մեջ խոսեն ել ամոթ ե.
Ի՞նչ մեծ բան ե, տո հեր որհնած,
Միայն, միայն մի գդակի վարձ:

Ուրբաթ որը քեռի Քուչին
Ուստից առաջ՝ բաց-բաց կուճին
Թափ-թափ տալով՝ ծանր ու մեծ,
Ուստա կատվի շեմքում կանգնեց:
— Ուստեն ո՞ւր ա... մակախս ո՞ւր ա...
— Մի քիչ կացի, հրես կերեա:

Շատեն յեկավ քուրքը հագին,
Շանը տեսավ, բեղի տակին
Իրեն-իրեն քիչ փնթվնթաց,
Ու մուշտարու վրա թնդաց.
— Ցուրտը տարավ... վահ, տնաշին,
Զես թողնում, վոր մի շունչ քաշեմ.
Հեշտ բան հո չի, հա նոր եմ
Ցրցամ տվել, թե վոր կարեմ:



— Դե՛, հեր որհնած, եղալես ասա,
Եղ բարկանալդ ել ինչի՞ս ա:
Փող եմ տվել, շուտով կարի,
Թե չե՞ ասա եզուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,
Համ խոսում ես, վրես գոռում,
Համ, համ, համ, համ,
Քանի՞ս, ախալեր, գնամ ու գամ...
Ասավ Քուչին ու նեղացած
Վերադարձավ պլուխը բաց:

Մին ել յեկավ, դարձյալ չկար.
Ես անդամը դիպան իրար.
Ել անպատիվ, անկարդ խոսքեր,
Ել հին ու նոր, ել հերն ու մեր,
Ել գող Փիսո, ել քաջալ Շուն...
Բանը հասավ դիվանբաշուն:
Շունը մինչե գնաց, յեկավ,
Ռւտառ կատուն կոտրն ընկավ,
Գլուխն առավ ու մի գիշեր
Հայդե կորավ, են կորչին եր...

Են որվանից մինչե որս ել
Շունն ես բանը չի մոռացե՛,
Մտքում հլա դեռ պահում ե.
Վորտեղ կատվին պատահում ե,
Վեր ե թռչում, վրա վազում,
Իրեն մորթին հետ ե ուղում.
Խոկ սկերես կատուն հանկարծ
Յետ ե դառնում ու բարկացած
Փշտացնում ե. մթամ նոր եմ
Յրցամ տվել, թե վոր կարեմ:

ԲԱՌԱՐԱՆ

- Կոտր ընկենել — սնանկանալ, չկարողանալ պարտքը վճարել:
- Մրամ — իրր թե:
- Դիվանբաշի — դատավոր:
- Մուշտարի — գնող:



55. ԵՍԿԻՄՈՍ ԼՈԿ-ՏՈՆ

Փոքրիկ եսկիմոս Լոկ-Տոն միայն վեց տարեկան ե,
բայց կարծես թե իսկական չափահաս ե: Նա մի շուն
ունի, վորի անունը Բայ ե և շատ նման ե գայլի: Լոկ-
Տոն ինքն ե կերակրում շանը:

Հոկ-Տոն ապրում ե հեռու հյուսիսում, ծովի առ
փին: Զմեռը ցուրտ ե ու յերկար: Չորս ամիս շարունակ
գիշեր ե լինում: Նրանք մանում են իրենց սառցե տնակ-
ները և սպասում ամռան:

Ամառը շատ կարճ ե տեղում: Նորից գալիս ե յեր-
կարատե ձմեռը:

Նրանց յերկրում ծառեր չեն բանում:

Հոկ-Տոն ցրտից չի վախենում: Մորթե շորեր ե
հազնում, գլխին տաք դլխարկ ե դնում:

Յերբ հայրիկը ձուկ կամ ծովահորթ ե բռնում,
Հոկ-Տոն շատ ե ուրախանում: Ինքն ել հայրիկի ու ըն-
կերների հետ յերբեմն ձկնորսության ե գնում:

56. ՏԱՐ ՅԵՐԿՐՆԵՐ

Կան յերկրներ, վորոնց ընակիչները չգիտեն՝ ինչ
ե ցուրտն ու ձյունը. այնտեղ չոգ ե թե ամառը, թե
ձմեռը: Արելին այնպես ե այրում, վոր գետնի վրա
փոտք դնել անկարելի յե: Իսկ յերբ անձրեներ են գա-
լիս, հեղեղներ են առաջանում:

Այդպիսի տեղերում բուսականությունը չափազանց
առատ ե. ծառերի բարձրությունը յերբեմն 60-80
մետրի յե հասնում, իսկ տերեների յերկարությունը՝
6-7 մետրի:

Խիտ անտառները լի յեն հսկայական մեծության
կենդանիներով, ահոելի միջատներով, չքնաղ թռչուն-
ներով:

Ահա ճարպիկ ու չարաճճի կապիկները, վորոնք
ծառից ծառ են ցատկում...

Ահա վիթխարի ոձերը, վորոնք կուլ են տալիս պա-
պահած փոքրիկ կենդանուն ու թռչունին:

Գիշեր ե. յեղեգնուտի մեջ թագնված վագրը վոր-
սի յե գուրս գալիս: Կատվի նման ձգվելով՝ նա ցատ-
կում ե ու կախվում պախրայի վզից:

Անտառի ծառերը կոտրատելով ճանապարհ ե բաց
անում լեռնաչափ փիղը...

Բայց ամենից ճարպիկն ու գեղեցիկը, ամենից
ուժեղը— առյուծն է: Յերբ նա մոնչում է, սարսափում
են բոլոր կենդանիները, թնդում ե անապատը:

Վա՛յ նրան, ով ժամանակին չի նկատի վորոն-
գուրս յեկած առյուծին...

57. ԻԳՈՐ ԶԿԱԼՈՎԻ ՀԵՌԱԳԻՐՆ ԻՐ ՀԵՐՈՍ ՀՈՐԸ

Քարտեղի մոտ կանդնած ե Իգոր Զկալովը. նա
հպարտությամբ ցույց ե տալիս իր հոր թռիչքի ու-
ղին Արտեկի բարեկամներին՝ Վալյա Մոլոկովին և
Վոլշ Վողովյանովին:

Իգորն իր հորն ուղարկեց հետեյալ հեռագիրը.

«Յալտա, 21 հունիսի.

Հյուսիսային Ամերիկա: Պորտլանդ քաղաք: Խոր-
հըրդային Միության հերոս Զկալովին:

Միրելի՛ հայրիկ, չնորհավորում եմ քեզ Մոսկվա-
Հյուսիսային Ամերիկա հաջող թռիչքի համար:

Արտեկի ճամբարի պիտոներներից և հոկտեմբերիկ-
ներից հաղորդում եմ ջերմ վողջույն քեզ, ընկեր Բայ-
դուկովին և ընկեր Բելյակովին:

Հունիսի 30-ին լրանում ե Արտեկի 12 տարին:

Մենք պետք ե կազմակերպենք պիտոներական մեջ



Խարույկ: Մենք, բոլոր պիոներներս և Հոկտեմբերի կույտում ենք քեզ, Բայդուկովին, Բելյակովին և մայրիկին՝ թռչել մեզ մոտ, մեր տոնական խարույկին մասնակցելու համար:

Քո վորդի իգոր»:

58. Մ. ԳՈՐԿՈՒ ՆԱՄԱԿԻ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Վողջույն Զեֆիրին, Լիզային, Վիտյային, Դիմային, Լենային, Մերիին, Մեմեյին, Շուրային, Իրինային, Պավլին, Նորային, Ֆեղյային, Բորյային, Գունդին:

Շնորհանդում եմ ձեր լավ տոնը, ցանկանում եմ ձեզ՝ թուլանալու աստիճան ուրախանալ: Յես ցանկանում եմ, վոր դուք ինձ հիշեք և ահա մտածեցի ուղարկել աղջիկներին ցըջանակներ, իսկ աղաներին



Մանուկների մեծ քարեկամ

Մաքսիմ Գորկի

փայտյա տումիեր— այստեղի գյուղացիների աշխատանքը:

Ձեր նամակին ստանալով՝ յես ուրախությունք ծիծաղեցի այնպես, վոր բոլոր ձկները դուրս հանեցին քթերը ջրից— թե ի՞նչ ե պատահել: Յես բացատրեցի նրանց, վոր մյուս ծովի ափին ապրում են շատ լավ մարդիկ. նրանք դեռ փոքր են, բայց յես հավատացած եմ, վոր յերբ մեծանան, ավելի լավը կլինեն, ահա! թե ինչու յեմ յես ուրախ:

Ի՞նչպիսի մեծ ուրախությամբ կտեսնվեյի ձեզ հետ, ի՞նչպես լավ կխաղայինք մենք, և ի՞նչքան զվարձավի բաներ կարող եյի պատմել ձեզ: Յես այնքան ել յերիտասարդ չեմ, բայց տիսուր մարդ ել չեմ և կարող եմ շատ լավ ցույց տալ, թե ինչ ե պատահում ինքնայեռի հետ, յերբ նրա մեջ կրակ են լցրել և մոռացել են ջուր լցնել: Յես շատ եմ սիրում խաղալ յերեխաների հետ: Այդ իմ հին սովորությունն ե. տասը տարեկան հասու-

Կում յես իմ փոքրիկ յեղբոր դայակն եյի: Յերբ նա
տեռավ, յես իմ մյուս յեղբայրների դայակը դարձա
և վերջը, յերբ քսան տարեկան եյի, տոներին հավա-
քում եյի բոլոր փողոցներից յերեխաներին և նրանց
հետ գնում եյի անտառ ամբողջ որով, առավոտից մին-
չել յերեկո: Այդ շատ լավ եր, գիտե՞ք: Հավաքում
եյի մոտ վաթսուն յերեխա, նրանք փոքրիկ եյին՝ չորս
տարեկանից սկսած և տասը, տարեկանից վոչ մեծ:
Վազվայլով անտառում՝ նրանք հաճախ չեյին կարո-
ղանում վոտքով տուն գալ: Բայց վրա համար ինձ մոտ
ինում եր հատուկ բազկաթոռ. յես կապում եյի այն
իմ մեջքին, այդ բազկաթոռի և ուսերիս վրա նստեց-
նում եյի հոգնածներին և այդպիսով նրանց տուն եյի
հասցնում: Հրաշալի յեր:

Իրինան խնդրել եր, վոր յես յերեխաների համար
պիեսա գրեմ: Յես փորձեցի, դուրս յեկավ, վոր չեմ
կարողանում: Յես կշանամ ձեղ համար հեքիաթ
գրել, — յեղա՞վ:

Յեր՝ Մ. ԳՈՐԿԻ

59. ՏՈՆԱԾԱՌԻ ՅԵՐԳԻ

Հաղած կանոչ, փշոտ գլխարկ,
կանաչ շորեր շողջողուն,
Յես մի ծառ եմ՝ մեջքս բարակ,
Վրաս զարդեր պաղպուն:


Իմ ուսերին ինչ սիրունիկ
Խաղալիքներ կան պես-պես.



Փայլուն աստղեր, ձի ու ձկնիկ,
Յեվ տիկնիկներ վարդերես:

Դուրսը ձմեռ ու խորը ձյուն,
Սառնամանիք հաճելի.
Իսկ իմ շուրջը խաղ-խնդություն
Յեվ մանուկներ սիրելի:

Զիլ հնչում են յերգ ու ծիծաղ,
Ամեն մանուկ՝ մի ծաղիկ,
Լավ է ապրել, լինել ուրախ
Մեր մեծ յերկրում յերջանիկ:



60. ԻՆՉՊԵՍ ԵՐ ՍՈՎՈՐՈՒՄ ՎԱԼՈՒՅԱՆ

Վալոդյան (Լենինը) դպրոց ընդունվեց ինն և կես տարեկան։ Նա շատ լավ եր սովորում։

Դպրոցում յերեխաներն իսկույն սիրեցին Վալոդյային, վորովհետեւ նա լավ ընկեր եր։

Վալոդյան սգնում եր, վոր ընկերները լավ պատրաստեն իրենց դասերը. բացատրում եր այն, ինչ վոր չելին հասկանում։ Հենց դրա համար ել Վալոդյան առավոտները վաղ եր արթնանում և դասերն սկսելուց կես ժամ առաջ եր դպրոց դալիս։

Մի անգամ Վալոդյան դպրոց և գալիս ու տեսնում, վոր ընկերները վիճում են ինչ վոր հարցի մասին։ Նրանք հենց վոր տեսնում են Վալոդյային, դիմում են նրան։

— Մենք չեզ ենք սպասում և ուզում ենք հարցնել, թե ինչպես ե գրվում իվանով ազգանունը, մեծատա-

ռով, թե՞ փոքրատառով։ Կոլյան և Շուրան ասում են՝ մեծատառով, իսկ Ալիմն ասում ե, թե փոքրատառով պետք ե գրել։

Վալոդյան բացատրում ե, վոր անունները պետք ե գրել մեծատառով. իվանով ազգանուն ե, դրա համար ել պետք ե գրել մեծատառով։

Վալոդյան լավ եր վերաբերվում իր բոլոր ընկերներին, ոգնում եր նրանց, բացատրում անհասկանալի բառերը, ուղղում նրանց թարգմանություններն ու չարադրությունները։

Զմեռային և ամառային արձակուրդներին Վալոդյան կամ կարդում եր, կամ վազվզում, զրոսնում. ձըմեռը չմուշկ եր խաղում, ամառը՝ այլ խաղեր, կամ լողանում եր գետում։

61. ՎԱԼՈԴՅԱՆ ՍԻՐՈՒՄ ԵՐ ԹԻՉՈՒՆՆԵՐԻՆ

Փոքրիկ Վալոդյան սիրում եր թուչուններ փորսալք ընկերների հետ թակարդներ եր դնում, իսկ ավելի վազ հասակում սիրում եր թուչուններ դնել և բաց թողնել նրանց ազատ ողում թուչելու։ Հիշում եմ, մի անգամ նա կարմ բալանջ մի թուչուն ուներ վանդակում։ Զգիտեմ, ի՞նքն եր բռնել, փողո՞վ եր առել, թե՞ վորեն մեկը նվիրել եր նրան. Հիշում եմ միսյն, վոր թուչունը շատ չապրեց, տիրեց, թոշնեց ու սատկեց։ Զգիտեմ, թե ի՞նչից այդպես յեղավ. մեղավո՞ր եր արդյոք Վալոդյան, վոր մոռանում եր թուչունին ժամանակին կերակրել, թե վոչ։ Հիշում եմ միսյն Վալոդյայի լուրջ, կենտրոնացած հայացքը, վորով նա նայում եր սատկած թուչունին և ալա ասաց վճռական։ «Այլևս յերբեք վանդակում թուչուն չեմ պահի»։

Ցեղ իսկապես, այլևս նա վանդակում թուչուն չեր պահում։

62. ՎԱՐԴԻՄԻՐ ԻԼՅԻՉԻ ՀԵՏ ՍԱՆԱԾՈՐԻԱՅՈՒՄ

Մի անդամ հայրիկս սանատորիա գնաց Վլադիմիր Իլյիչի հետ տեսակցելու. ինձ ու յեղբորս ել հետը տարավ: Յերբ տեղ հասանք, յես ու յեղբայրս սկսեցինք այդում խաղալ, իսկ հայրիկս խոսում եր Իլյիչի հետ:

Հետո մեր խաղին միացավ Վլադիմիր Իլյիչը մենք խփում եցինք իրար ու փախչում. հետեւց վազելիս յես պինդ բռնեցի Իլյիչի թեր: Նա աղատեց թեվն ու սկսեց ծիծաղել ինձ վրա՝ ասելով:

— Չըոնեցի՞ր, չըոնեցի՞ր:


Յես հարցրի.

— Ինչպես թե, չե՞ վոր բռնել եմ:

Նա պատասխանեց.

— Դու վոչ թե ինձ բռնեցիր, այլ իմ բաճկոնի թեր, — ու փախավ:

Այն ժամանակ Վլադիմիր Իլյիչի ձեռքը վիրափորված եր, նա իր բաճկոնի մի թեր չեր հագնում: Այսպիսով Վլադիմիր Իլյիչին չկարողացա բռնել:



63. ԺԱՄԻ ԶՈՐՄԻՆ

Մի հարուստ անդիմացի ավտոմոբիլով գնում եք հայրան: Նա շտապում եր գնացքին: Հանկարծ մեքենան կանգ առավ:

Շոփերն ավտոմոբիլց դուրս յեկանի, գմբարիք վերդրեց ու լուս կանգնեց:

— Մեքենան փչացե՞լ ե, — հարցրեց հոկտեմբեր Շտապիշ, ժամի չորսին գնացքը մեկնում ե. հինգ րոպե յե մնում:

Շոփերը նայեց ժամացույցին և ասաց.

— Հիմա Մոսկվայում թաղում են Լենինին՝ ամբողջ աշխարհի բանվորները առաջնորդին: Ամեն տեղ կյանքը հինգ րոպեյով կանգ է առնում:

— Վաղվանից դու ե'լ իմ շոփերը չես, — կատաղած հայտարարեց հարուստը:

64. ԲՆԿԵՐ ՍՏԱԿԻՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆՆ

1

Գորի քաղաքի յերկու կողմից անցնում են Քուռ և Լյախովս դետերը: Գորին ըրջապատված է պաղատուայդիներով: Քաղաքում բարձրանցւմ են հին բերդի ավերակները:

Հին Գորին ուներ մոտավորապես հաղար բնակիչ, շատ յեկեղեցիներ, խանութիներ, դինետներ և այն ժամանակվա ամբողջ դավառի համար մի քանի դըմորոց:

Այդ քաղաքում, կոչկակար Վիսսարիոն Ջուղաշվիլու ընտանիքում, 1879 թվականին ծնվեց Իոսիֆը:

Յերբ յես ընդունվեցի Գորու ծխական դպրոցը, առաջին անգամ հանդիպեցի 11-ամյա Իոսիֆ Ջուղաշվիլուն:

Շաբաթական յերկու անգամ ունենում եյինք վրացերեն լեզվի դաս:

Յես վրացական բառերը ճիշտ չեյի արտասանում և դա առիթ եր տալիս աշակերտներին ծիծաղելու ինձ



ի. Վ. Շոთարին

վրա: Իսկ Իոսիֆին, ընդհակառակը, ոգնության յեկավ ինձ:

Համեստ ու զգայուն այդ տղան մոտեցավ ինձ ու առաց:

— Յեկ յես քեզնից սովորեմ մինդրելերեն լեզուն,
իսկ դու ինձնից՝ վրացերենը:

Ընկերոջս այդ զգայուն վերաբերմունքը սաստիկ հուզեց ինձ:



իոսիֆին: Նա շատ ընդունակ և ուշիմ եր, վորով աչքի յեր ընկնում աշակերտների մեջ:

Սովորաբար նա լուրջ եր, հաստատակամ, միտամանակ լավ խաղընկեր: Պարապմունքներից հետո շտապում եր տուն և նրան միշտ կարելի յեր տեսնել դիրքը առաջին նստած:

Նրանց սենյակն ուներ ընդամենը մի քանի քառակուսի մետր տարածություն և գտնվում եր խոհանոցի մոտ: Մուտքն ուղիղ բակից եր, սենյակը մի աստիճանով նույնիսկ բարձր չեր դետնից: Հատակը պատաժ եր աղյուսով, փոքր լուսամուտից շատ քիչ լույս եր թափանցում ներս: Սենյակի ամբողջ կահ-կարտոսին բաղկացած եր մեկ փոքրիկ սեղանից, նստարանից և լայն թախտից, ծածկված «ձլոպով»—ծղուել խսիրով:

Իոսիֆի մայրը խոնջուկ վաստակ ուներ: Նա ըղբաղվում եր Գորու հարուստ բնակիչների տներում իվացք անելով և հաց թիւելով:

Մոր ծանր, չարքաշ կյանքը, չքավորությունն
անդրագառում եր իսսիֆի վրա: Նա չեր սիրում այ-
ցելել ունեոր կյանք վայելող մարդկանց: Զնայած յես
նրան այցելում եյի որպա ընթացքում մի քանի ան-
դամ, բայց նա ինձ մոտ բարձրանում եր շատ սակավ,
վորովհետեւ իմ հորեղբայրն այն ժամանակ հարուստ
եր, իսկ յես ապրում եյի նրա տանը:

65. ԼԵՆԻՆԻ ՇԲԱՆՇԱՆԱԿԻՐ ՄԱՄԼԱՔՅԱԹԸ

1

Յերեք չե յեղել, վոր այդպիսի փոքրիկ աղջիկ
ստանա այդքան մեծ նվեր:

Տասներկու տարեկան Մամլաքյաթ Նախանդովան
կրկնողի լավագույն աշխատանքի համար խորհրդային
կառավարության կողմից պարզեատրվեց Լենինի
շքանշանով:

Մամլաքյաթը Տաջիկստանի սոցիալիստական դաշ-
տերի լավագույն հարվածայինների հետ յեկել եր
Մուկվա:

Նրա ուրախությանը չափ չկար, նա առաջին ան-
գամն եր Մոսկվայում, նա պետք է տեսներ Մեծ Ստա-
լինին:

Առավոտյան Մամլաքյաթն արթնացավ շատ վաղ,
նայեց իր չորս կողմը, «Մի՞թե յես Մոսկվայում
եմ», — մտածեց նա, արագ վեր կացավ, հագնվեց,
սանրվեց և պատրաստվեց գնալ կրեմ:

Նրա դեմքը ժպտում եր:

2

Յերբ Մամլաքյաթը մտավ կրեմի գեղեցիկ,
սպիտակ սյունազարդ դահլիճը, նա գրավեց բոլոր



պատգամավորների ուշադրությունը. — Նա պատգա-
մավորների մեջ ամենափոքրիկն եր:

Հանկարծ դահլիճը լցվեց ծափերի վորոտով: Մամ-
լաքյաթի սիրուն արագ բարախեց: Նա բեմի վրա տե-
սավ ընկեր Ստալինի ուրախ ժպտացող դեմքը: Մի՞թե
դա յերազ չե, մի՞թե դա ճիշտ է, մտածում է Մամլա-
քյաթը: Կամաց-կամաց ծափերը զադարեցին: Մամլա-
քյաթն իր աչքերը չեր հեռացնում ընկեր Ստալինից:

Յեկ ի՞նչ. Մամլաքյաթն ինքն ել չեր հիշում, թե
ինչպես նա մի վայրկյանում զտնվեց բեմում, վա-
թաթվեց ընկեր Ստալինի վզովը: Ծափահարություն-
ները նորից ուժգին թնդացին:

3

Մամլաքյաթը պատմեց իր կատարած աշխատանքները

մասին, նրա ձայնը զնդում եր դահլիճում՝ Համար-
ձակ և հպարտ։ «Յես որական հալվաքում եյի 102 կիլո-
րամբակ, յես դպրոցում ել հարվածային եմ»։

Մամլաքյաթը դեռ խոսքը չեր վերջացրել, ընկեր
Ստալինը մոտեցավ, շոյեց նրան և կապեց նրա ձեռ-
քին մի գեղեցիկ ժամացույց։

Դահլիճում նորից բարձրացավ ծալիերի ուժգին վո-
րոտ։ Մամլաքյաթը իրեն յերբեք այդպես բախտավոր
չեր զդացել։

66. ԱՄԱՅԱ-ՌՈՒԻՒ

(Դոլորես Խբարբուրիի աղջիկը)

Նա աչքեր ունի թուխ ու խելացի
Յեվ կարոտով լի մի սիրտ բարտիսուն,
Վա՛րդ և շաղերով ջինջ յուսաբացի
Յեվ ժիր և, ինչպես դաշտերի մեղուն։

Նստած նա հիմա ջերմին սենյակում,
Իր նոր, հարազատ ընկերների մոտ,
Մայրիկի համար բարձիկ և նախշում՝
Կարմիր թելերին խառնելով կարոտ...

Յեվ գիշերը, յերբ հողնած մարտերում
Մայրը փակում է աչքերը պայծառ—
Տեսնում է մի պահ Ռուփսին խոհուն,
Նրա վստոստուն մատները համառ,

Վոր գարուն կյանքի հույսերով անմար՝
Բարձիկ և նախշում մայրիկի համար...

67. ԻՆՉՊԵՍ ՅԵՍ ԾԱՆՈԹԱՑԱ ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ ՀԵՏ

Յերբ յերթը վերջացավ, յես և մի քանի յերեխա-
ներ մոտեցանք դամբարանին և սկսեցինք ձեռքերս
թափահարել, առաջնորդներին վողջունել։

Հանկարծ տեսնում եմ— ընկեր Ստալինը թափա-
հարում է ձեռքը, ինձ իր մոտ է կանչում։ Յես շուռ
յեկա և մատով ցույց տվի կուրծքս՝ «ի՞նձ։ Ընկեր
Ստալինը ժամաց և դիմով արեց։ Յես սանդուխով վեր
վազեցի, բարձրացա ամբիոն և մոտեցա ընկեր Ստա-
լինին։

— Ի՞նչպես և անունդ, — հարցրեց ընկեր Ստա-
լինը։

— Լենինա։

— Կեցցե՛ս. լավ անուն ե։
Ապա ընկեր Ստալինը հարցրեց Հայրիկիս և մայ-
րիկիս անունը։ Այդ ժամանակ Հրապարակով անցնում
եր նվագախումբը։ Վորոշիլովն ասաց։

— Լավ են նվագում, պետք է ծափահարել։

Յես կանգնել եյի ընկեր Ստալինի և ընկեր Վորո-
շիլովի հետ և ծափահարում եյի։

Յերբ նվագախումբն անցավ, ընկեր Ստալինը
հարցրեց։

— Իսկ զու հիմա ի՞նչպես տուն կգնաս։

Յես պատասխանեցի, վոր կանցնեմ մորաքը ջու
մոտ և տոմսի փող կվերցնեմ։

— Իսկ ինչքա՞ն փող և պետք, — հարցրեց ընկեր
Ստալինը։

— Տասը կոպեկ, — ասացի յես։

Ընկեր Ստալինը քրքրեց գրանները, բայց վոչինչ
չգտավ և ժպտալով դիմեց Վորոշիլովին։

— Դու չունե՞ս, ընկեր Վորոշիլով։
Վորոշիլովը գրաննից մի թղթադրամ Հանեց և

յերկարացրեց ինձ։
Հետո մենք միասին սանդուխներով ցած եղանք

դամբարանից։ Ճանապարհին ընկեր Ստալինը Հարցուց ինձ ցույց տալով Բուլյոննուն։

— Սա ո՞վ ե։

Յես պատասխանեցի, վոր ընկեր Բուլյոննին ե։ Հետո նա ցույց տվեց մյուս ընկերներին՝ Վորոշիլովին, Մոլոտովին, Կալինինին ու Հարցնում եր ինձ. «Սա ո՞վ ե»։ Յես բոլորին ճանաչում եյի։

Հետո ինձ տուն տարան։

Այս հանդիպումը յես յերբեք չեմ մռանալ։

68. ԴՈՆԴ-ՏՈՒ

(Զինական բանակի պատանի մարտիկը)

1

Նա 13 տարկան ե և արդեն մեկ տարուց ավելի յե, ինչ պիոներական ջոկատի ջոկատավար ե։ Լինել պիոներ Զինաստանում, դա նշանակում ե պայքարել հայրենիքի ազատության համար, պաշտպանել հայրենիքը ճապոնական ֆաշիստներից։

Դոնդ-Տույի պիոներները մտան չինական մի բանակի մեջ և սկսեցին աշխատել այնտեղ վորպես սանիտարներ։ Ծանր վիրավորներին նրանք հիվանդանոց եյին տանում, իսկ թեթև վիրավորների վերքերը տեղում կապում։ Կավի ժամանակ պիոներները փամփուշտ եյին հասցնում չինական հերոս մարտիկներին և շատ անգամ իրենք ել եյին կրակում։

Ճապոնական ֆաշիստները շատ պատանի չինացիներ են բռնել ուղարկել քանդելիս, պահեստներ հրդեհելիս և իրենց այլ վնասներ հասցնելիս։ Դրա պատճառով ել ճապոնական բանտերը հիմա լիքն են չինական հերոս պիոներներով ու պատանիներով։



2

Դոնդ-Տուն միշտ առաջին շարքերումն եր և որինակ եր ցույց տալիս մյուսներին։ Նույնիսկ հասակավորները հիմնում եյին նրա հերոսությամբ։ Մեկ անգամ զորամասի հրամանատարը իր մոտ կանչեց նրան։

— Դոնդ-Տու, դու պետք ե անցնես մոտիկ քաղաք, վորտեղ թշնամու զորքերն են տեղավորված։ Կաքը, վորտեղ թշնամու զորքերն են տեղավորված։ Ինչով վոր բո՞ղ ես։ Դու պետք ե վնասես թշնամուն, ինչով վոր կարող ես և նրա քանակի և ուժի մասին մեզ տեղեկություն բերես։

Դոնդ-Տուն պատիվ տվեց։

— Կա, հրամանատար։

Այնուհետեւ ութ որ նա չերեաց։

Դոնդ-Տուն շատ զժվարությամբ անցավ թշնամունքիկունքը: Նրան ամեն մի քայլափոխում վը-տանդ եր սպառնում: Ութ որ անընդհատ նա փչացրեց գնացքների ռելսեր, հրդեհեց զինապահեստներ և կառողացավ շատ տեղեկություններ հավաքել թշնամունքի մասին:

Ութ որ անընդհատ նա թագնված մնաց մարդկանցից: Կերակրվում եր, ինչով վոր պատահում եր: Անտառում զտնված ժամանակ նա յերեք որ միայն վայրի պառուներով եր կերակրվում:

Ութերորդ որը Դոնդ-Տուն հոգնած, սովլած, պատռությած հազուստներով ներկայացավ իր զորամասը և զեկուցեց հրամանատարին.

— Ձեր կարգադրությունները կատարված են, հրամանատար:

— Կեցցե՛ս, Դոնդ-Տու, Զինաստանը չի վոչնչանա, քանի քեզ պես հերոսներ ունի:

69. ԿՈՌԻՆԿՆ ՈՒ ԱՂՎԵՍԲ

1

Աղվեսն ու կռունկն ընկերացան: Կռունկը բուն չի-նեց, ձու ածեց, թուխս նստեց, ձագ հանեց: Աղվեսն ել ձագեր ունեցավ, մայր դարձավ:

Մի որ կռունկը դնաց ձագերի համար կերակուր բերելու: Տնպահ աղվեսը բոնեց կռունկի ձագերից մեկին, վիզը վոլորեց, անուշ արեց: Տուն յեկավ կռուն-կը և ի՞նչ տեսնի... աղվեսը լալիս ե, իրեն քրքրում ու ասում...


— Կռունկ քուրիկ, եսպես ել անբախտություն...
— Ի՞նչ անբախտություն, ի՞նչ ե պատահել, աղվես քուրիկ:

— Բա չես ասի, մեր բալիկը չկա' ու չկա: Ենքան մա'ն յեկա, ենքան մա'ն յեկա, չկա' ու չկա':
— Վո՞ր բալիկը:
— Մե՛ր բալիկը:
— Մեր վո՞ր բալիկը:
— Նա՛, նա՛,
Աչքս կուրանա.
Փափկամագիկ,
Յերկար-վղիկ,
Յերկար-վոտիկ,
Յերկար-տոտիկ,
Բոյը բարձրիկ,
Զենը քաղցրիկ...
Գովում եր աղվեսը, իրեն քրքրում, աչքը խիռում
Հազար թափում:
— Աղվե՛ս քուրիկ, — ասում ե կռունկը.
— Դու ձագի տեր ես,
Դու սիրող մեր ես,
Արցունք մի՛ թափի,
Արցունք մի՛ չափի:
Դա ել չար բախտից,
Դա ել մեր բախտից:
— Հա՛, հա՛, — հեկեկում եր աղվեսը, — հա՛, կը-
ուունկ քուրիկ, հա՛, լացը չի ողնի, անցածն անցած ե:

2

Յերկրորդ որը կռունկն ելի գնում ե կերակուր բե-
րելու: Տնպահ աղվեսն ելի բռնում ե կռունկի մյուս
ձագին, վիզը վոլորում ու անուշ անում:
Յերրորդ որն ել ուտում ե վերջին ձագին:
Կռունկն ես անգամ հասկանում ե, վոր ձագերին ու-
տողը քուրիկ աղվեսն ե, բայց իրեն չհասկացողի տեղ
ե դնում:

— Աղվե՛ս քուրիկ, — մի որ ել ասում ե կռունկը,



Են Ե՞ Իմ ձագերը կորան, տաճողի աչքը դուրս դա, քա
ձագերն ել մեծացան, իրենց-իրենց կապրեն: Սրի դը-
նանք՝ քիչ ման կանք, որտներս բացվի:

— Ե՛, ո՞ւր գնանք, կռունկի քուրիկ:

— Ա՛յ, հենց կուզես յերկինք թռչենք, տեսնենք
վերեն ի՞նչ կա:

— Ի՞նչ ես ասում, քուրիկ, — ծիծաղեց աղվեսը, —
ի՞նչպես կարող եմ քեզ հետ թռչել, յես թեեր չունեմ:

— Ե՛, ի՞նչ անենք, վոր չունես. յես հո ունե՞մ:
Նստիր ինձ վրա, միասին թռչենք:

Աղվեսն ինքն իրեն մտածում ե.

«Ես ինչ լավ յեղավ. կզնամ յերկինք, պատահած
թռչունը կխեղղեմ, վեր կածեմ գետին. հետ գալիս ել
քուրիկիս կրոնեմ, կուտեմ... Սրանից ել լավ բա՞ն»:

Աղվեսը նստում ե կռունկի վրա:

Կռունկը թափահարում ե թեերը, վեր բարձրա-
նում, գնում ե գնում, հասնում ե յերկինք ու հան-
կարծ շուռ ե գալիս:

Մին ել աղվեսը մեջքի վրա դրւ' իկ... ընկնում ե
գետին ու ջարդվում:

— Աղվես քուրիկ, — ցած գալով ասում ե կռուն-
կը, — այդ ել գո՛ բախտից, այդ ել քո՛ բախտից:

ԱՌԱԾՆԵՐ. — 1. Ինչ կը ցանես, այն կը հնձես:

2. Կարասին ինչ ձեն տաս, այն ել կլսես:

70. ԱՌՅՈՒԽՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Առյուծը ծերացել եր. թաթերը թռւացել եյին,
առամները՝ թափվել. ել չեր կարողանում վորս բըռ-
նել: Նա մտածեց խորամանկությամբ վորս ճարել.
լպանկեց քարայրում ու հիվանդ ձևացավ: Գաղանները

գալիս եյին նրան տեսության։ Բայց վոչ վոք հետ չեր
դառնում։ Առյուծը բոնում եր նրանց և ուտում։

Յեկավ նաև աղվեսը, կանգնեց քարայրի մուտքի
առջև և հարցրեց։

— Ի՞նչպես ե առողջությունդ։

Առյուծը պատասխանեց.

— Վատ ե. ինչո՞ւ ներս չես դալիս, բարեկամս։
Աղվեսը պատասխանեց.


— Կզայի, բայց տանդ շուրջը թողած հետքերն
ուրիշ բան են ասում. շատերն են ներս մտել, իսկ վոչ
վոք դուրս չեկել։

ՀԱՆԵԼՈՒԿ

Կենդանի յե վայրենի,
քնքուշ ու թանդ մորթ ունի.
ինքը ճարպիկ, խորամանկ,
բունը ունի հազար ծակ։

71. ԱՐԻՌ, ԱՐԻՌ, ՈՌՎ ԳԱՐՈՒՆ

Զմռան մի ցուրտ առավոտ
Ծիտը թռավ ծտի մոտ,
Ասաց՝ ծիտիկ,
իմ լավ քուրիկ,
վոչ թռչում ես, վոչ յերգում,
ի՞նչ ես անվերջ յերազում։
Ասաց— գարուն եմ ուզում,
Վազող առուն եմ ուզում,
Կանաչ մարգեր եմ ուզում,
Գարնան յերգեր եմ ուզում։



Ուզում եմ յես ծիլ ու խոտ,
Գարնան յերկինք, մաքուր ոդ,
Արտե՛ր, արտե՛ր, շող ու չաղ,
Կարմիր վարդեր, յերգ ու տաղ։

Արի, արի, ո՞վ գարուն,
Գալդ բարի, զո՞վ գարուն,
Ծիտիկներիս բարեկամ,
Ծիլ ու ծաղիկ ծով գարուն։



72. ՆԱՄԱԿ ՎՈՐՈՇԻԼՈՎԻՆ

Ընկեր Վորոշիլովին
Նամակ գրեցի.
— Ընկեր Վորոշիլով,—
Այսպես սկսեցի,—
Յեղբայրս այս տարի
Բանակ և գնում,
Գիտեմ, վաղուց և
Նա այդ յերազում:
Ընկեր Վորոշիլով,
Ուրախ կլինես,
Յերբ իմ մեծ յեղբորը
Բանակում տեսնես:
Վարդետ դարբին և
Նա աշխատանքում,
Լավ մարտիկ կլինի
Կարմիր բանակում:
Ընկեր Վորոշիլով,



Վորոշիր նրան,
Կմեռնի, չի թողնի,
Վոր մեզ վրա դան:
Ընկեր Վորոշիլով,
Ապագա մարտում
Նշանակիր նրան
Առաջին դիրքերում:
Նա դիպուկ խփող
Ինքդ կտեսնես,
Յերբ թշնամու դեմ
Գնալ հրամայես:
Դոկ յեթե կմեռնի
Իմ յեղբայրը մեծ,
Այդ մասին խոկույն
Նամակ կդրես:

Ընկեր Վորոշիլով,
Շուտով բոյ կառնեմ,
Յեղբորս փոխարեն
Դիրքում կկանգնեմ:



73. ԿԱՐՄԻՐ ՇԲԱՆՇԱՆԱԿԻՐԸ

Կոլյայի մայրը մանկապարտեղ յեկավ: Յերբ նա
Հանում եր վերաբեռն, յերեխաները նկատեցին, վոր
Նա իր կրծքին կրում և կարմիր դրոշի վառվառն շքա-
նշան:

— Ուսո՞ւ, մորաքույր ե, բայց չքանչան ունի,—
Պարմացած բացականչեց Կիմը:

— Դուք ինչո՞ւ համար են ձեզ չքանչան տվել: Պատ-
մեցէք, մորաքույր, — աղմկեցին այս ու այն կողմից
յերեխաները:

Կոլյայի մայրը ժպտալով ասաց.

— Հաղ, կպատմեմ, յերեխաներք

Այս գեղարքը պատահեց 1919 թվականին: Ծանր ժամանակ էր: Գեներալներն ու սպաներն ամեն կողմից չըշապատել եյին մեր յերիտասարդ Խորհրդային հանրապետությունը: Մեր գործարանից համարյա բոլոր բանվորները ճակատ եյին մեկնեյ: Նրանց հետ յես ել դնացի:

Մի անգամ խիստ հրացանաձգության ժամանակ անտառից հանկարծակի դուրս թռան մի խումբ սպիտակներ: Մենք անակնկալի յեկանք, կարմիր բանակացիններից վոմանք թողին հրացաններն ու թաղնվեցին:

Ես չկարողացա համբերել. դոռացի՝ «Ընկերներ, չհանձնվեք»: Իսկ ինքս հրացանս ձեռքիս հարձակվեցի սպիտակների վրա: Տեսնում եմ՝ ինձ հետեւում են մերոնք «ուռու» բացականչելով: Ամբողջ դունդը կովի բռնվեց: Սպիտակներին հալածեցինք ու հաղթեցինք:

Ահա թե ինչո՞ւ համար եմ ստացել այս չքանշանը, — վերջացրեց իր պատմությունը Կոլյայի մայրը:

74. ՄԱՐՏ

Ա՛խ, այսպես ել գիտ ամի՞ս,
Մարդու հանդիստ չի տալիս.
Այսոր քւրախ որ կանի,
Վաղը՝ անձրե ու քամի.
Առավոտը՝ պայծառ ող,
Կեսորը՝ մութ ու ամպոտ:
Մին հաղնում ե սպիտակ,
Մին կանաչին ե տալիս.
Մի որ ցուրտ ե, մի որ տաք,
Մին ինդում ե, մին լալիս...
Ա՛խ, այսպես ել գիտ ամի՞ս

ՀԱՆԵԼՈՒԿ

Բերան չունի՝
Փչում ե,
Ու յերբեմն ել
Հաջում ե.
Վոչ տուն ունի
Վոչ ել աեղ,
Նա լինում ե
Ամեն աեղ:

75. ՇՆԵՐԸ ՊԱՏԵՐԱԿՄՈՒԽ

(Կարմիր բանակայինի պատմածից)

1

Թունդ կռիվ եր, իսկ փամփուշտն արդեն պակասել եր: Թշնամու կրակի տակ ո՞վ կարող ե փամփուշտ հասցնել մեղ:

Այս ի՞նչ ե. ինչ-վոր կենդանի գնդակներ են գլոր զում դաշտի միջով:

— Շնե՞ր են, այդ մեր չներն են. փրկված ենք: Նրանք մոտենում են խրամատներին. թեթև ցատկում են ոռումբերից առաջացած փոսերի վրայով: Գնդակը պոկել ե մեկի ականջը. մյուսի վոտքն ե կոտրվել ոռումբի հարվածից. յերրորդն անվնաս ե, բայց հաղիվ ե չնչում — հոգին ե:

Մենք բաց ենք անում նրանց մեջքին ամրացրած պայուսակները և հանում փամփուշտները: Կապում ենք վիրավոր չների վերքերը, և նրանք նորից հետ են վազում: Փամփուշտներ ունենք. մենք սիրու ենք առնում և թշնամուն հետ ենք մղում:



2

Տաք կռվից հետո մենք հաղթեցինք սպիտակներին։ յես վիրավոր եյի, հետ եյի ընկել։ Արյունաքամ եյի յեղել, թուլացել։

Մերոնք հեռացել են, չեմ տեսնում նրանց, չեմ լրասում ձայները։

Ջրամանս գատարկել եմ, բայց ելի այրվում եմ ծարավից... վերքս ցավում ե...։

— կմեռնեմ, — անցնում ե մտքովս։

Յերկու որ եր անցել. հույսս կտրել եյի. հանկարծ շան հաջոց եմ լսում. ուրախությանս չափ չկա, միայն վախենում եմ՝ չլինի շունն ինձ թողնի անցնի...։

Վո՞չ, նա մոտեցավ, գտավ ինձ. ինքն ել ե ուրախացել, լիզում ե աչքերս, քիթս, ուրախ կլանչում ե։

Նա պառկեց կողքիս, մեջքը դեմ արեց. մեջքին պայուսակ կար, վրան կարմիր խաչ։ Յես ձեռքս յերկարացրի, մի կերպ յոդ ու վիրակապ հանեցի, վերքս կապեցի։ Շունը չսպասեց, անհայտացավ. յես դիտեյի, վոր նա գնաց ոզնություն կանչելու։

Այդակս ել յեղավ. կարծ ժամանակից հետո ինձ մոտ յեկան կարմիր բանակային սանիտարները. շունն առաջնորդում եր նրանց։

Ինձ դրին պատգարակի վրա ու տարան։ Սանիտար շունը փրկեց ինձ մահից։

ԲԱՌԱՐԱՆ

1. Վիրակապ — վերքերը կապելու վաթեթ («բինտ»)։
2. Պատգարակ — հիվանդին՝ վրան պարկեցնելու և տեղափոխելու սարք («ճամփիկա»)։

76. ԱՐԵՎՆ ՈՒ ԾԻՄԾԱՆՔ

Անձրեից հետո ծագեց արևն ու ծիածան կապեց։ — Նայի՛ր ինձ, քեզնից գեղեցիկ եմ. — ասավ ծիածանն արևին, — տե՛ս, քանի՛ գույն ունեմ. կանաչ, կարմիր, կապույտ, դեղին...։ — Բայց գիտե՞ս, վոր յե՛ս եմ քեզ այդքան գույն տվողը, — ասաց արև։ — Դո՞ւ... սուտ ե, — ժողոտց ծիածանը։ — Սո՞ւտ ե, — ասաց արևն ու մտավ ամպի տակ։ Արևն ամպի տակ մտավ թե չե, ծիածանն ել անհետացավ։

77. ՀԵՇ ԶԱՆ, ԱՆՑԱՆ

Հե՛յ ջան, անցան
Բուք ու բորան,
Զմեռ պառին
Ջունի հետ,

Հովն ե խաղում
Սար ու զաշտում,
Ողը պայծառ,
Բուրավետ։

Հե՛յ ջան, շուտով
Յերգ ու տաղով
Կզա գարուն
Ցանկալի,

Պայծառ արև,
Կանաչ տերև,
Խաղ ու ծաղիկ
Կրերի:

78. ԶՄԵՌԸ

Մարտ ամիսն եր, բայց դեռ ցուրտ ձմեռ եր:
— Ո՞Փ, ինչքա՞ն յերկարեց այս տարվա ձմեռը, —
ասում եյին մարդիկ:

— Ո՞Փ, յե՞րբ պետք ե վերջանա այս անիրավ ձմեռ, —
գանգատվում եյին գաղաններն իրենց վորջերում:
— Ո՞Փ, յե՞րբ պետք ե ազատվենք այս անտանելի
ձմեռվա ձեռքից, — տրտնջում եյին թռչունները մերկ
ճյուղերին:

Ու սաստիկ բարկացավ ձմեռը: Վճռեց մեկ անգա-
մից վոչնչացնել բոլորին:

Ջայն տվեց բուք ու բորանին, կանչեց սառնամառ
ներքները, հավաքեց իր բոլոր զորությունն ու հարձակ-
վեց աշխարհի վրա: Խոր ձյունով բռնեց ճամփաները,
կապեց ջրերը, սառցե վարագույրներ քաշեց լուսա-
մուտներին, վորջերի բերանը լցրեց և դանակի պես
կտրող սուր քամին բաց թողեց դաշտերի, սարերի ու
ձորերի վրա:

Բայց իզո՞ւր: Թեև թռչուններից մի քանիսը ցըր-
տահար յեղան, բայց մնացածները կուչ յեկան տների
ծածկերի տակ, ծխնելույզների մոտ, տաք ճեղքերում

Է չմեռան: Վայրի կենդանիները՝ մուշտակները հագին՝
չեյին վախենում ձմեռվա բարկությունից և դուրս եյին
դալիս վորս անելու:

Մարդիկ ավելի պնդացրին պատուհաններն ու գըռ-
ները, ավելացրին վառարանի կրակը, հագան իրենց
ամենատաք շորերն ու գնացին իրենց գործին: Զմեռը
տեսավ այս բոլորը, տեսավ ու հուսահատվեց: Ցուրտն
որեցոր թուլացավ, արեը քանի գնաց, ավելի տաքա-
ցավ, ջրերը խոխոջեցին, թռչունները յերգեցին, դաշ-
տերը կանաչ հագան ու մարդիկ բաց արին դուռ ու
պատուհան:

Գարուն եր:

79. Գ Ի Շ Ե Ր

Գեղեցիկ ու զով
Գիշեր ե պայծառ:
Անուշիկ քնով
Քնած ե աշխարհ:

Ծառերը մեղմիկ
Քամուց որորվում,
Հեղիկ ու նազիկ
Ցերտ են սվավում:

Իսկ լայնատարած
Յերկնակամարով
Լուսինն ե կամաց
Անցնում սահելով:

Աստղերն ել սիրուն
Ժպիտով փայլում,
Իրենց սիրելուն
Ճամփա յեն գնում:

Գեղեցիկ ու զով
Գիշեր ե պայծառ,
Անուշիկ քնով
Քնած ե աշխարհ:

Ու քնած յերկրին
Ծառերն ու առուն
Յերգով միասին
Որոր են առում...

80. ԾԻԾԵՌՆԱԿԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ծիծեռնակը բուն եր չինում
Յե՛վ չինում եր, և' յերգում,
Ամեն մի չյուղ կաղցնելիս
Առաջվան բունն եր հիշում:

Մեկ անդամ եր նա բուն չինել
Յե՛վ շատ անդամ կարկատել,
Բայց այս անդամ վերադարձին
Բունն ավերակ եր գտել:

Այժմ նորից բուն ե չինում,
Յե՛վ չինում ե, և' յերգում,
Ամեն մի չյուղ կաղցնելիս
Առաջվան բունն ե հիշում:

Նա հիշում ե անցած տարին
Իր սնուցած ձագերին,
Վորոնց ճամփին հափչտակեց
Արյունաբրու թշնամին:

Բայց նա կրկին բուն ե չինում,
Յե՛վ չինում ե, և' յերգում,
Ամեն մի չյուղ կաղցնելիս
Առաջվան բունն ե հիշում:

81. ՀԱՏԻԿԻ ԶԱՐԹՆԵԼԸ

Յորենի հատիկը պառկած եր հողի տակ, հատիկի
մեջ քնած եր փոքրիկ սաղմը:
Քնած եր նա ամբողջ ձմեռը:
Գարնան արեկ շողը յեկավ, կանչեց նրան.
— Զարթի՛ր, գալուն ե:
Սաղմը զարթնեց հատիկի մեջ: Զարթնեց, սաստիկ
քաղց զգաց, սկսեց ծծել իր մոտի պաշարը: Ծծեց,
ծծեց ու մեծացավ, պատուց պարուրներն ու արմա-
տիկները խրեց ցած, փափուկ հողի մեջ, նոր կերակուր
վորոնելու:

Իսկ արեկի ջերմությունը շարունակ քաշում եր նը-
րան վերեկց, ու սաղմը ձգվում եր գեպի այն կողմը,
գեպի վեր:

Ձգվեց, ձգվեց ու հանկարծ նրա դալար ծիլը դուրս
նայեց հողի տակից:

Ի՞նչ տաք եր, ի՞նչ պայծառ ու ի՞նչ ազատ եր նը-
րա շուրջը:


Առավոտյան հովիկը ցողի մի կաթիլ ուրեց նրա
կիսաբաց թերթիկին ու փսփսաց.

— Բարի՛ լույ:

ՀԱՆԵԼՈՒԿ. — Սև հինեմ, կանաչ դործեմ,
դեղին կտրեմ:

82. ԿԱՆԱՉ ԱԽՊԵՐ

Ե՛յ, կանաչ ախպեր,
Ե՛յ, ճանանչ ախպեր:
Արի՛, քեզ հետ բեր



Հովհաննես Թումանյան

Արևի շողեր,
Բեր անուշահոտ
Ծիլ, ծաղիկ ու խոտ,
Կարկաչուն վտակ,
Յերկինք կապուտակ,
Խատուտիկ հավքեր,
Զբնդան յերգեր,
Գառների մայուն,
Խաղ, ուրախություն...
Ե՛յ, կանաչ ախալեր,
Ե՛յ, ճանանչ ախալեր:

83. Գ Ա Ր Ո Ւ Ն

Զուգմլել են կըկին
Անտառ ու այգի,
Վշշում ե ուժգին
Զուրը գետակի:

Հավքերը սիրուն
Համերգ են կազմել.

Արտում ու գաշտում
Յերգ ու հորովել:

Թիթեռներն ուրախ
Թոչում են դես-դեն...
Ջան, տեսքիդ մատաղ,
Դարուն ե արդեն:

84. Ա.ՉԱ.ԲԻԱՅՈՒՄ

Յես հայրիկիս հետ եքսկուրսիա եյի գնացել Բա-
թումի: Ահա մենք Սև ծովի զեղեցիկ ափերին ենք,
ցիտրուսային բույսերի տնկարանների մեջ:

Մանդարինի, նարնջի, կիտրոնի ծառերի ճղները
կախվել են հասած դեղնագույն պտուղներով: Մեծ-փո-
քը, տղա-աղջիկ, անուշահամ գեղեցիկ մրգերը քա-
ղում, լցնում են կողովների մեջ: Մեծերը մանդարի-
նով լիքը կողովները տանում, թափում են ավտոների
մեջ, վոր կանգնած են այգու դռանը:


50 հազար մանդարին, 70 հազար, 80 հազար,—
տետրի մեջ նշանակում ե հանձնողը:

— Մննդարար ու անուշահամ պտուղներն իր սե-
ղանի վրա ունենալու յե մեր խորհրդային ամեն մի
բանվոր, ամեն մի կոլտնտեսական, տմեն մի քաղաքա-
ցի: Թող բոլորն ողտուեն մեր կոլխիդայի գանձերից,—



ասում են կոլտնտեսականները:

Ամեն կողմ դիտելուց հետո մենք վերադարձանք
ծովափի: Լողացանք, հանգստացանք ծովափին:
Մեր զեկավարը խոստացավ մյուս անդամ մեզ
տանել թեյի տնկարանները:



Ա.Բ. Խնկոյան (Խնկո-Ապեր)

85. Գ Ա Բ Ո Ւ Ն

Զմեռն անցավ...
Յեկավ գարուն...
Չյունը հալվեց,
Լցվեց առուն:

Արև ծագեց
Արևելքից,
Ծիլեր քաշեց
Գետնի տակից:

Տաք հարավից
Յեկան հավքեր,
Բուն հյուսեցին
Ենկեր-ընկեր:

Ետուը պտկեց,
Տվեց բողբոջ,
Առուն հանեց
Անուշ խոխոջ:


Փուլեց կանաչ
Սարի լանջին,
Կարմրեց մորին
Թփի միջին:

Դաշտը թավիչ
Զգեստ հազավ,
Կանգնեց քարին
Յերգեց կաքավ:

Արոտ գնաց
Ծնած մաքին,
Կաթը տվեց
Անուշ ձագին:

Կարապն իջավ
Բնկավ գետը,
Ոճը գնաց
Ռուտն իր հետը:

Մուկ ու մողես,
Միջատ, գեռուն
Արևն յելան,
Ցելան դարուն:



ԳԱՐՈՒՆ

1

— Բարով յեկար, սիրուն թռչնիկ, հազար բարով,
անուշիկ, յերգիր մեղ համար,— ասաց ծառի ծայրին
որորվող կեռասը:

— Այս գիշեր չատ ցուրտ եր, յես մըսեցի, այն-
չափ մըսեցի, վոր քիչ մնաց սառչելի, — մեջ ընկավ
մի ուրիշը. — այս մեկ թշիկս ինչպես կարմրել ե, իսկ
այս մեկը դեռ սպիտակ ե. ա՛խ, քանի-քանի անդամ
այս տերեխն խնդրել եմ, վոր արևի առաջը չառնի, նա
չի լսում:

— Բան չկա, վոռքըիկ կեռաս. — ասաց թռչնիկը. —
արեն այդ մեկ թշիկը ել կկարմրացնի:

Թռչնիկը յերգեց, բոլոր կեռասները հանգիստ լը-
սում, ուրախանում եյին:

— Ա՛յ, ա՛յ, ողնեցե՛ք, ողնեցե՛ք, — աղաչեց մի
կեռաս, — այս թրթուրն ինձ ուզում ե ուտել:

Թռչնիկը հասավ, կտցեց թրթուրին ու կերավ:

— Ծնորհակալ եմ, բարի թռչնիկ, չնորհակալ. դու
իմ կյանքս աղատեցիր. այդ թրթուրներն իմ քույրե-
րից շատերին կերան, չորացրին. յես ուզում եմ մեծ,
սիրուն, կարմիր կեռաս դառնալ:

2

Փոքրիկ կեռասը քիչ-քիչ մեծացավ, կաս-կարմիր
դարձավ: Նա ուրախ-ուրախ չորս կողմն եր նայում,
կարմիր թշիկներն ամենքին ցույց տալիս: Մի որ ել
յեկավ պարտիզանը, սանդուխը դրեց և կեռասները
քաղելով՝ կողովը լցրեց:

— Ինչո՞ւ յեն քաղում, այս ո՞ւր են տանում իմ
քույրերին, — զարմացած ասում եր կեռասը: — Յես
ամենաբարձր ճյուղի վրա յեմ, ինձ վոչ վոք չէ
հասնի:

Քիչ հետո ծառի վրա կեռաս չմնաց:
— Մենակ տխուր ե, — մտածեց կեռասը, — ել
չարժե ապրել:

3

— Բարե՛ քե՛զ, բարե՛, — ասաց թռչնիկը, — ինչ-
պես տեսնում եմ, մենակ ես մնացել:

— Այո՛, տխուր ե, — ասաց կեռասը, — յես շատ
ուրախ եմ, վոր յեկար, մի ասա տեսնեմ, յես գեղե-
ցիկ չե՞մ, մի՞թե ինձ չես հավանում:

— Յես սիրում եմ քեզ, դու շատ լավն ես, —
ասաց թռչնիկը:

— Վոր այդպես ե, կտցիր ինձ, թող իմ թշիկները
քեզ բաժին լինեն. դու ինձ կյանք ավիր. քո լավու-
թյունը չեմ մոռացել: Բայց գիտե՞ս ինչ կա, սիրելի
թռչնիկ, մի ինուիր ունեմ, այն ել կատարիր:


— Յես քեզ համար ամեն բան կանեմ, — ասաց
թռչնիկը:

— Կորիզիս մեջ մի բան եմ գեռամ, նա պիտի ապ-
րի, ծլի, մեծանա, մեծ ծառ դառնա: Յերբ դու ինձ
ուտես, տար իմ կորիզը պարտիզում տնկիր:

— Պարտիզում դու չես կարող մեծանալ, — պա-
տասխանեց թռչնիկը, — խոտը հնձելիս քեզ կկտրեն:
Յանկապատի մոտ մի լավ տեղ գիտեմ, այնտեղ կտըն-
կեմ, վոր դու մեծանաս, սիրուն ծառ դառնաս:

87. Խ Խ Ո Ւ Ե Զ

Ես ի՞նչ տուն,
ես ի՞նչ բուն:
Ո՞վ ե ապրում
ես բնամ:



Դուռը, զը՞նդ,
մին ել տը՞նդ
Դուրս յեկավ, դուրս՝
գլխաբաց,
Տունը մեջքին
մի խխունջ.
Տունը տաք-տաք,
տան ներսում
Խըխունջը մերկ
չի մրսում:
Տեսեք, վոտներ
կից փորին,
Մի-մի աչք ել
պոզերին,
Զույդ չոշափուկ
ցից գլխին,
Վոր միշտ գտնի
իր ուղին,
Վոր որն որին
արևշող,
Շոշափ-շոշափ
ու փորսող,
Աչքը չոած,

սիրտը դող,
 թաց տերենից
 խմի ցող,
 Սունկի հյութով
 կուշտ ճաշի.
 Հետո իրեն
 ներս քաշի,
 իր տան մեջը
 թագնվի,
 Դրսից կանաչ
 հաղնվի:
 Ինչո՞ւ այդպես,
 հասկացի,—
 Վոր թշնամին
 չկտցի:

88. ԿԿՈՒՆ ՈՒ ԱՔԼՈՐԸ

— Չնաշխարհիկ
 իմ աքլարիկ,
 Չայնդ զիւ-զիւ,
 Վոսկի ծիւ-ծիւ,
 Յերգերիդ մեջ
 Բյուր յելեջ:
 — Կկուր քուրիկ,
 Հուրիկ, բուրիկ,
 Քո ձայնն ել ե
 լավ զեղզեղում,
 Ծոր ե տավիս
 Ու մըղմղում:
 Յերգ եմ լսել
 Յես շատ ու քիչ:

Բայց չեմ տեսել
 Քեզ պես յերգիչ:
 — Վոսկեփետուր,
 Անուշ իմ քուր,
 Կուզեմ լսել
 Չայնդ անսպառ
 Միշտ անդադար:
 — Պուճպուճուրիկ,
 Մի պուտ ջրիկ,
 Կկուր քուրիկ,
 Յերգվում եմ յես,
 Վոր լռում ես
 Եսքան պուճուր,
 Վոլասելով
 Իմ աչքերը
 Կտրում են ջուր:
 Վո՞րտեղից ե
 Քեզ եղանական,
 Մաքուր, քնքուչ
 Ու զընդպընդան:
 Դուք եղանակը
 Ամբողջ ցեղով.
 Մի բուռ բան եք
 Թեև տեղով,
 Բայց ձեր յերգը
 Խիստ աջողակ,
 Չունի, չունի
 Վոչ մի սոխակ:
 — Գոհ եմ քեղնից,
 Կտրիճ աքլար,
 Խղճով ասենք,
 Դու միալար
 Լավ ես յերդում

Դրախտահավից,
 Թուչունների
 Լավի լավից:
 Վողջ աշխարհը
 Խոսքիս վկա,
 Քնզ պես յերգիչ
 Չըկա, չըկա:
 Եստեղ ծիտը
 Ծիտիկ-միտիկ
 Ասավ. «Հա
 Սբանց մտիկ,
 Ի՞նչ լավ դիտեն
 Իրար յեղել.
 Ասա թողի՞ն
 Պակաս տեղ ել:
 Ե, լավ, հերիք
 Իրար դովեք.
 Աշխարհ գիտի,
 Թէ դուք ով եք»:



89. ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ

Մայիսի մեկն եր. Արեգնազան տատի թոռնիկ
 Ստյոպան պատրաստվում եր գնալու մայիսմեկյան
 ցույցին:

Արեգնազան տատիկի աչքերը լցվեցին, նա լաց
 եր լինում:

— Տատի, ա'յ տատի, լա՞ց ես լինում: Ելի հայր
 իկին ու մայրիկի՞ն հիշեցիր, — հարցրեց Ստյոպան:

— Այօ', — պատասխանեց տատիկը:

Ստյոպան խնդրեց, վոր տատիկը պատմի նրանց
 մասին:

— Ի՞նչ պատմեմ, ա'յ բալիկ, վոր հիշում եմ յ

սիրտս մզկտում ե: Հայրիկդ ուրախ մարդ եր: Յեր-
 գում եր միշտ, յերգում եր ժողովրդի մասին, ազատ
 կյանքի մասին: Ահա մի որ ել ասում ե. «Մայիսի մե-
 կը բանվորական տոն ե. պետք ե փողոց դուրս
 գանձը»...

Նրանք ընկերներով հավաքվեցին ու գնացին քա-
 ղաքից դուրս: Մայրիկդ ել հետներն եր. նա ել բան-
 վորուհի յեր:

Ընկերները վորոշեցին, վոր հայրիկդ ճառ ասի
 ցույցի ժամանակ: Իսկ ճառ ասելու համար բանտ եյին
 նստեցնում: Այդ բանն իմ սրտովը չեր. տխուր եյի ու
 ասում եյի հայրիկիդ. «Զգուշ կաց, ա'յ վորդի, կրու-
 նըվես՝ կչարչարեն»: Եհ, ինձ լսողն ո՞վ եր...

Նա գնաց: Մի արև որ եր... Այն ժամանակ մայիսի
 մեկն այսպես ազատ չեյին տոնում: Գու ել հակառակի
 պես զարթնեցիր և սկսեցիր լաց լինել: Յերկու տարե-
 կան հազիվ լինեյիր:


Շատ սպասեցի, յերեկոյան ուշ մայրիկդ յեկավ.
 գունատ, աչքերը արցունքով լի...

Պատմեց, վոր վոստիկանները վրա յեն տվել
 բանվորական ցույցին, բանվորները դիմադրել են,
 զորք ե յեկել, սկսել են կրակել բանվորների վրա...
 Պատմեց, վոր հայրդ խոսում եր, սիրտ տալիս իր ըն-
 կերներին... Մի գնդակ ել կուել ե նրան ու ցած գլո-
 րել:

Դրանից հետո մորդ որն ել սեացավ, — հիվանդ
 եր, վշտոտ. ապրուստի միջոց չունեյինք... և մի որ
 ել աչքերը փակեց... Յես ու դու մնացինք մենակ:

Ստյոպայի վրա շատ եր ազդել տատիկի պատ-
 մությունը: Նա տխուր եր. լայց յերբ պատուհանից
 դուրս նայեց ու տեսավ, վոր շարքով անցնում են բան-
 վորներն ու կարմիր փողկապով պիոններները, զվար-
 թացավ ու ասաց:

— Դե՛, տատի ջան, յես ել եմ դնում բոլորի Հետ
մայիսի մեկը տոնելու:




90. ՄԱՅԻՍՄԵԿՅԱՆ ՅԵՐԳ

Մեզ սուլիչն ե կանչում, լսի՛ր,
Այսոր ուրախ շքերթ ունենք.
Շո՛ւտ հավաքվեք, ա՛յ ընկերներ,
Հաղար, հաղար շարքեր կաղմենք:
Փողկապ կապած վառ ու կարմիր,
Յերգենք ուրախ, աշխույժ ու ժիր.
Շրջենք մեր լայն փողոցներով,
Մայիսեկյան տոնն ե այսոր.
Յեւ համարձակ կանչով տաենք.
— Մենք յերջանիկ մանուկնե՛ր ենք:

91. ՄԱՅԻՍԵԿՅԱՆ ԵՐ

Մաղիկները մեկ-մեկ բուսան
Հարյուր-հազար զույնով ներկած,
Լեռ ու հովիտ ծաղիկ դարձան,
Մաղկանց ծովը մեղմիկ ծփաց.



Մանուշակ

Զանգակիկ

Մանուշակը կապույտ գլխով
Թագ ե կացել թփերի տակ,
Զանգակիկը մեղմ ճոճալով
Թերն ե ներկել կապույտ-սպիտակ:

Սպիտակ հագած հեզ Շուշանը
Փափսում ե զեփյուռի հետ:

Թերը փռած Մարգարիտը
Որորվում ե առաջ ու յետ:
Կարմիր մախմուր, կուրծքը սևիկ,
Մենմենակ ե ալ կակաչը,



Մարգարիտ



Անբառամ ծաղիկ

Սպիտակ փրփուր, լայնաթեփիկ
Բոժոժն ել կա ծաղկանց մեջը:
Սիրուն վարդի գովքը մնաց,
Քնքուշ վարդի, կարմիր Վարդի,
Փշերով ե շրջապատված,
Փուշն ե սուր-սուր կարմիր Վարդի:

Մի անթառամ ծաղիկ ել կա,
Ծաղիկների ծաղիկն ե նա,
Նորի նման հինն անթառամ,
Ամառ, ձմեռ չի չորանա:

92. ԴՐՈՒՅՇԸ

— Դողո՞շը, խուլ դողո՞շը, քարաղողո՞շը, — կանա՞չը չում են տղաներն ու հաճախ քարեր են գցում խեղճի վրա:

Նրանք չգիտեն, վոր դողոշը — մարդու բարեկամնեն: Նա մարդուն վոշ մի վնաս չի տալիս:

Ցերեկը դողո՞շը ննջում ե մի մութ ու խոնավ անեկյունում: Հենց վոր որը մթնում ե — դուրս ե գալիս վորսի:

Ահա սողում ե թրթուրը կամ վորդը: Դողո՞շը նըրան տեսավ: Կատվի նման կամտցուկ սողում ե հետեւ վից: Մոտեցավ, ցատկեց ու իր զարմանալի լեզվով բռնեց նրան: Դողո՞շի լեզուն հետեւի կողմից ազատ ե — առջեւից ե կպցրած բերնին: Ահա լեզվի ազատ մասը դուրս ե նետում, կալչուն թքով պատաճ: Միջատը կամ թրթուրը կպչում ե լեզվի ծայրին ու լեզվի հետ յետ ե գնում դեպի բերանը: Դողո՞շ փակում ե աչքերն ու կուլ ե տալիս իր համեղ վորսը:

Կուլ ե տալիս ու նորից աչքերը չուած նայում — նոր վորս չի՞ յերեսում արդյոք:

Ցեվ ամբողջ գիշերը նա թրթուրներ, միջատները ու խխունջներ ե վորսում: Գիշերային միջատներից շատերը մեր դաշտերի, բանջարանոցների, պարտեզների ու այգիների վնասատուներն են: Դողո՞չն անխնավոչնչացնում ե նրանց:

Դողոշը — մարդու բարեկամն եւ:
Պահպանեցիք դողոչներին:

ԲԱԼԱՐԱՆ

1. Դողոշ — դորչ գեղնավուն, մսոտ գորտ, վորը մեծ մասամբ ցամաքի վրա յեւ ապրում:
2. Խխուճ — խեցիներով պատած միջատներ:
3. Վճառառ — վնաս տվող (կենդանի, միջատ և այլն):



93. ԹՌՉՈՒՆԻ ՄՏՍԱԾՄՈՒՆՔԸ

Յես ապրում եյի մի փոքրիկ տան մեջ
Առատ ու անփույթ,
Աշխարհն ինձ համար կլոր եր անվերջ,

Կեղեց կապույտ:

Նրանից հետո աշքս բաց արթ

Մի փոքրիկ բնում,

Տեսա՝ աշխարհը հարդից ե շինած,

Ու մայրս ե շինում:

Մի որ ել, բնից գլուխս հանած,

Նայում եմ դես-դեն,

Տեսնեմ աշխարհը տերեկից շինած,

Մեր բունը վրեն:

Հիմի թռչում եմ հեռո՛ւ-շատ հեռու;

Ամեն տեղ գնում.

Բայց թե աշխարհը ինչի՞ց ե շինած,

Ել չեմ հասկանում:

94. ԳՅՈՒՂԱՑԻՆ ՈՒ ԱՐՁԸ

1

Գյուղացին իր բոստանում

Գարնանը սերմ եր ցանում:

Արջը յեկավ. «Բարեւ քեզ,

Ի՞նչ ես անում քեզ ու քեզ.

Արի, ա'յ մարդ, միանանք,

Մեկ-տեղ անենք վար ու ցանք

Վար ու ցանքը մեր կիսրար,

Հունձն ել անենք հավասար»:

— Աչքիս վրա, արջ ապեր,

Ոտար հո չենք. կուզես, բեր

Հենց առաջին անդամը

Ցանենք մոտիս շաղգամը:

Ինձ արմատը հողումը,

Թեղ տերեւն ու ցողունը:



2

Քաղցը ու խոչոր շաղգամը
Հողում տողեց աշնանը:
Մեր ապերն ու գյուղացին
Շաղգամն հողից հանեցին:
Ապերն առավ փրերը,
Արմատներն ել ընկերը:
Արջը տեսավ, վոր խարմեց,
Մարդու դեմը քիչ լարվեց:
«Վա՞յ, ինձ խարե՞ գյուղացին
Կաց են մյուս ցանոցին
Ինչ վոր ցանենք հողումը,
Նրան կտամ ցողունը»:

3

Մյուս տարի ցանոցին
Արջին ասաց գյուղացին.
— Ապեր, արի ելի մենք
Կիսովի մի բան ցանենք?
Արջը թե՝ «Հա, շատ բարի,
Միայն անշուշտ ես տարի»

Ինձ արմատը հողումը,
Քեզ փրերն ու ցողունը»:
— Համաձայն եմ յես նորեն
Հիմի ցանենք մենք ցորեն:

Մարդը գիտեր իր բանը.
Ապորը հետ՝ իր տանը
Ցորենն ածեց տոպլակը,
Տվեց նրա շալակը.
Ու ցանեցին են արտը
Բրդուտ ապերն ու մարդը:


4

Ընկերները հունիսին
Արան հնձեցին միասին:
Հասկերն ընկան գյուղացուն,
Արմատն ընկավ սարեցուն:
Արջը ել չհամբերեց,
Եղտեղ մի լավ փրփրեց.
Արդեն սաստիկ նեղացավ,
Թքեց, մարդուց հեռացավ:
Ու են որից մինչ հիմի
Շատ ե մարդուն թշնամի:

ՀԱՆԵԼՈՒԿ. — Պապս գետնի տակին, միրուքը՝ գետնի յերեսին:

ԲԱՌԱՐԱՆ

1. Փրեր — տերեներ:
2. Կիսրար — կիսովին:



ԶՈՐԾ ՅԵՂԱՆԱԿ

1

Որը տաք ե... ձյունը հալվեց արեից,
Քչքչալով ջուր և հոսում դռներից.
Մար ու ձորեր զարդարվեցին կանաչով,
Դաշտը ծածկվեց վոչխարների հոտերով:
Հա՛, հա՛, հա՛, գարուն ե.
Տեսեք, ինչպես սիրուն ե...

2

Սաստիկ չոգ ե. ցորեն, դարի հասել են,
Հնձողները խոտը քաղել, դիզել են.
Ծառերը վողջ ծածկվել են տերեռով,
Պտուղները «ճիկ» են անում ժպտալով:
Հո՛, հո՛, հո՛, ամառ ե.
Արեց խիստ կվառե...


3

Շոգերն անցան. պտուղները քաղեցին,
Հացով, մրգով ամբարները լցրեցին,
Յերկինքն ամպեց, բարակ անձրև և մաղում.

Մերկ դաշտերը և ծառերը վողողում:
Ե՛յ, Ե՛յ, Ե՛յ, աշուն ե.
Տեսեք, ինչպես նախշուն ե...

4

Որը կարճ ե, արե չկա, շատ ցուրտ ե,
Ճերմակ ձյունը քուլա-քուլա կրրդէ.
Մարդ, անասուն, բուք բորանից վախեցած,
Տաք-տաք տներ, խոր-խոր բներ են մտած:
Ո՛յ, ո՛յ, ո՛յ, ձմեռ ե.
Անտանելի մի բեռ ե...



Ց Ա. Ն Կ

Եջ

(Աստղանիշերով ցույց տրված Եյուքերը չափածո յին)

* 1. Դպրոցի ճամփան «Լուսաբեր»-ից	3
2. Ամառը (փոխադր. Մ. Գուրգարյան)	4
3. Արևի ճառագայթները — Ղ. Աղայան	6
* 4. Անուշ որեր — Փողովրդական	7
5. Աշխարհում մի մեծ յերկիր կա (ըստ Իլյիմի)	7
* 6. Քսանվեցի յերգը — Հ. Հայրապետյան	8
* 7. Ծիտիկը — Խ. Ճավհավաճեն	9
8. Վոզիկն և ոճը — Ապրեսյան	10
* 9. Իրիկուն — Հովիկ. Թումանյան	12
10. Յեռ... Խնկո-Ապեր	13
* 11. Գետակը — «Լուսաբեր»-ից	13
12. Եերկու այծ — Ղ. Աղայան	14
13. Գայլն ու դառնուկը — (փոխադր.)	15
* 14. Բեկիկ ձենիկը — Խնկո-Ապեր	17
15. Պետիկի գեղատումը — «Հոլովնմբերիկ»-ից	18
* 16. Աղջեսը — Հովիկ. Թումանյան	20
17. Զշշիկը — Ստ. Զորյան	21
* 18. Առավոս — Ա. Պուշկին	23
19. Մեր շունը — Ա. Պուշկին	24
20. Սեկրետը և Սլուժբան — (փոխադր.)	25
21. Փոքրիկ գործակատարը — (ըստ «Լուսաբեր»-ի)	28
* 22. Հովիկի հրաժեշտը — Հովիկ. Թումանյան	30
* 23. Եեղբայրիկներ — (ըստ Ա. Քարտոյի)	31
24. Դժվար աշխատանքը — (փոխադր. Մ. Գուրգարյան)	33
* 25. Տերևաթափ — Հովիկ. Թումանյան	35
26. Հեռախոսը — Ստ. Զորյան	36

* 27. Ցորնատերն ու ջաղացպանը — Խնկո-Ապեր	37
28. Հերոս Հովիկը — «Խ. Հայրապետյան»-ից	40
* 29. Դժվար տարի — Հովիկ. Թումանյան	41
30. Քնարիկը հեղափոխական — Վերեյսկայա	41
* 31. Խնաերնացիոնալ — Ե. Պատյե	44
32. Այդ անունը ջնջել չի լինել — Ձերմանետոս	44
33. Ընկեր Ստալինը Ցարիցինում — (փոխադր.)	46
34. Ստալինը և Հաշիմը — (փոխադր.)	48
35. Ընկեր Վորոշիլովը գնեցցրի մոտ — (փոխադր.)	49
36. Ֆրունզեն մարտում — (փոխադր.)	51
37. Բուղյոննին և սպիտակները — (փոխադր. Մ. Դ.)	52
38. Չապաև — (փոխադր.)	54
* 39. Հոկտեմբեր — Հ. Հայրապետյան	55
40. Ընկոնիկիձեն և մանուկները («Պիոն. Պրավդ»-ից)	56
41. Ընկոն կիրավը մեզ մոտ — («Պիոն. Կանչ»-ից)	57
* 42. Շաղիկները — Հովիկ. Թումանյան	59
43. Զման զալը — «Մայրենի լեզու»-ից	59
* 44. Ճպուռն ու մըջունը — Խնկո-Ապեր	61
45. Գիշերն անոռառում — (փոխադր. Սիմակ)	64
* 46. Պառավի հորթը — Ղ. Աղայան	67
47. Կենդանիների վեճը — Մ. Սիրիոյան	68
48. Սահնակը — Սիմակ	68
49. Անտառի գիրքը — (փոխադր. Մ. Դ.)	70
50. Բորը — (ըստ Լ. Տուստոյի)	72
* 51. Զմեռ — Խնկո-Ապեր	73
52. Յերկու աղվես — Քրդ. Ժազ. հեքիաք	74
53. Հարյուրքանվեց բուկի (ըստ Վ. Գուրովի փակ. Մ. Դ.)	75
* 54. Շունն ու կատուն — Հովիկ. Թումանյան	78
55. Եսկիմոս Լոկ-Տոն — (փոխադր. Մ. Գուրգարյան)	81
56. Տաք յերկոներ — «Կարմիր արև»-ից	82
57. Իդոր Զկայուիլի հեռագիրն իր հերոս Հորը	84
58. Մ. Գորկու նամակը յերեխաներին	85
* 59. Տոնածառի յերգը — (ըստ Հովիկ Պողոսյանի)	86
61. Վալորյան իրում եր թռչուններին (փոխադր.)	89
60. Խնչպես եր սովորում Վալորյան — Ա. Ուլյանովա	88
62. Վ. Իլյիչ հետ սանտորիայում — (փոխադր.)	90
63. Ժամը չորսին (փոխադր.)	90
64. Ընկեր Ստալինի մանկությունը — «Պիոներ Կանչ»-ից	91
65. Լենինի չքանչանակիր Մարտաքյաթը — (փոխադր.)	94
* 66. Ամայա Ռութա — ըստ Վեսպերի	96
67. Խնչպես ծանոթացա ընկեր Ստալինի հետ	97

68. Դոնդ-Տու— «Պիոներ Պրավդա»-ից	98
69. Կռունկն ու աղվեսը— Խնկո-Ապեր	100
70. Առյօւծն ու աղվեսը— Դ. Աղայան	104
* 71. Արի՛, արի՛, ով դարուն— Մ. Կորյուն	104
* 72. Նամակ Վորոշիլովին— Լ. Կիլիսկո	106
73. Կարմիր չքանչանակիրը (փոխադր.)	107
* 74. Մարտ— Հովհ. Թումանյան	108
75. Շները պատերազմում (փոխադր. Մ. Դուրգարյան)	108
76. Արևն ու Հիածանը— Խնկո-Ապեր	111
* 77. Հե՛յ ջան, անցան— Հ. Հայրապետյան	111
78. Զմեռը— «Մայրենի լեզու»-ից	112
* 79. Գիշեր— Հ. Հ.	113
* 80. Ծիծեռնակի հեշողությունը— Դ. Ագայան	117
81. Հատիկի դարթնելը— «Լուսարեր»-ից	115
* 82. Կանաչ ախակը— Հովհ. Թումանյան	115
* 83. Գարուն— Հ. Հայրապետյան	116
84. Աջարիայում— Մարգարիտ	117
* 85. Գարուն— Խնկո-Ապեր	118
86. Կեռասը— «Իասընիք»-ից	121
87. Խխունչ— Խնկո-Ապեր	122
* 88. Կկուն և աքլորը— Խնկո-Ապեր	124
89. Կարմիր Շբուշակ (փոխադր. Մ. Դուրգարյան)	126
* 90. Մայրամեկյան յերդ— Ա. Շայիք	128
* 91. Շաղկներ— Խնկո-Ապեր	129
* 92. Դոդուը (փոխադր. Մ. Դ.)	131
* 93. Թոչոնի մտածմումքը— Հովհ. Թումանյան	132
* 94. Գյուղացին ու արջը— Խնկո-Ապեր	133
* 95. Զորս յեղանակ	136

Գլավլիտի լիազոր՝ Բ-1114 • Հրատ. 5135.


Պատվեր 61. Տիրաժ 40,000.

Թուղթ 62X94. Տպագր. 9 մամ.

Մեկ մամ. 23,348 նշան.

Հանձնված է արտադրության 14 | 1940 թ.

Ստորագրված է տպագրության համար 22 II 1940 թ.



«Ազգային գրադարան



NL0240230

8261

230034

H | АРМ.
H | 2+6162